

ՆՈՐ ԶՈՒՂԱՍ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՄՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ Ժ. ՏԱՐԻ, ԹԻՒ 93, ՆՈՅԵՄԲԵՐ-ԳԵԿՏԵՄԲԵՐ 2012



ՎԵՐԱՓՈՒՈՒՄՆ
Ս. ԱՄՏԻԱԾԱԾԻ

ՀՀ ՍԳԻՌՈՒԹՅԱՆ ՆՆԵՐՐԻ
ՀՐԵՆՈՒԹՅԱՆ ԶԻՎՈՐԵՆՆԵՐ



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՊԱՏԳԱՄԸ**

Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻ

**ՎՊԵՆՆԵՐՈՒՄԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒՄԻ
ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒՄԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒՄԻ**

Թեսաղոնիկեի եկեղեցուն ուղղած իր նամակի մեջ, Պողոս առաքելն ասում է, թե կարելորդ Քրիստոսի երկրորդ գալստի ժամանակն իմանալը չէ, այլ՝ նրան միշտ պատրաստ լինելն է եւ ապա հարց է շոշափում թե՛ արդեօք Քրիստոսի **«սիրուց մղւած ծառայում էք ուրիշներին»** (հմմտ. 1.3):

Քրիստոսի սիրուց մղւած ծառայել... Այս է քրիստոնէական հաւատի էութիւնը, նպատակը, պատգամը:

Աստուած սեր է: Սա մի սովորական հաստատում չէ, այլ՝ քրիստոնէական հաւատի ամենից հիմնական ճշմարտութիւններից մէկն է: Սերը սոսկ Աստծու ստորոգելին չէ այն Աստծու բնութիւնը, իսկութիւնն է բնորոշում: Սերը նաեւ Աստծու բնութիւնից բխող գործն է բնութագրում: Այլ խօսքով՝ սերն Աստծու յայտնութեան մղիչ ուժն է, նրա խորքն ու միաժամանակ՝ նպատակը:

Արդարեւ, իր անհուն սիրուց առաջնորդւած, Աստուած ստեղծեց տիեզերքը:

Իր երկնային սիրուց մղւած Աստուած ստեղծեց մարդը, նրան շնորհելով իր աստուծային պատկերը: Իր հայրական սերը մարդու նկատմամբ Աստուած նաեւ յայտնեց մարգարէների միջոցով:

Աստծու գերագոյն սիրոյն գագաթնակէտը հանդիսացաւ իր Միածին Որդու մարդեղացումը: **«Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր Միածին Որդուն տուեց...»** (3.16), ինչպէս հաստատում է Յովհաննէս աւետարանիչը:

Արդ, Բեթղեհէմն Աստծու յաւերժական սիրոյ թանձրացումն է. նա Աստուած-մարդ սիրոյ հաղորդութեան շոշափելի արտայայտութիւնն է:

Սակայն, աստուծային սերը Բեթղեհէմի մեջ չմնաց: Այն Բեթղեհէմի Մանկան հետ աճեց ու վերածեց ծառայութեան: Նազարէթ քաղաքի մեջ Քրիստոսն իր երկրաւոր առաքելութիւնն սկսեց Եսայի մարգարէի հետեւեալ բառերն ուղեցոյց ունենալով. **«Տիրոջ Յոգին ինձ վրայ է, քանզի Նա Ինձ օժեց եւ ուղարկեց՝ փրկութեան աւետիս տալու աղքատներին, մխիթարելու սրտաբեկներին, ազատութիւն բերելու գերիններին, տեսողութիւն տալու կոյրերին, ազատելու կեղեքածներին...»** (Ղկ 4.18-19):

Քրիստոս Ինքն իրեն ըմբռնեց որպէս մարդկանց ծառայ եւ իր փրկագործական առաքելութիւնն իրագործեց ծառայութեան միջոցով. **«Մարդու Որդին Ինքն էլ չեկաւ ծառայութիւն ընդունելու, այլ ծառայելու եւ իր կեանքը տալու որպէս փրկագին շատերի համար»** (Մր 10.45):

Սեր ու ծառայութիւն իրար հետ սերտօրէն ներդաշնակեցին, իրար ամբողջացրին, հարստացրին եւ հզօրացրին Քրիստոսի կեանքի ու առաքելութեան մեջ: Այս յանձնառութեամբ Քրիստոսը ծառայեց բոլորին՝ հիւանդին, աղքատին, մեղաւորին, զրկեալին, անառակին, մանկան թէ ծերին:

Աստծու Որդին ծառայեց գերագոյն նւիրումով եւ ամբողջական յանձնառութեամբ, որովհետեւ սիրեց մարդուն: Քրիստոսն իր սերը ծառայութեամբ թարգմանեց: Մարդու հանդէպ Աստծու սերն իր լիարժէք իմաստն ու վաւերական արտայայտութիւնը գտաւ, երբ ծառայութեան վերածեց: Քրիստոս այնքան սիրեց մարդուն, որ նրա նկատմամբ իր ունեցած սերն իրեն առաջնորդեց մինչեւ խաչ: Առաքեալը հաստատում է. **«Աստուած մեզ հանդէպ ունեցած իր սերը յայտնեց դրանով, որ երբ տակաւին մեր մեղքերի մեջ էինք, Քրիստոսը մեզ համար մեռաւ»** (Յո 3.16):

Ահա թէ ինչու Քրիստոսի կեանքի հայելու դիմաց կանգնած առաքեալը յիշեցնում է մեզ թէ՛ Աստծու Որդին մարդացաւ, աղքատացաւ ու ծառայի կերպարանք առաւ, որպէս սիրոյ արտայայտութիւն ծառայելու մարդուն: Առաքեալը նաեւ կոչ է ուղղում մեզ, որ Քրիստոսի նկատմամբ ունեցած մեր սիրուց մղւած մենք էլ ծառայենք մեր նմաններին:

Արդ, Աստծու մարդեղութեան խորհրդից եկող պատգամը իւրաքանչիւր քրիստոնէայի համար յստակ է՝ սերը ծառայութեան վերածել: Քրիստոսն իր հետեւորդներին պատւիրեց. **«Ինչպէս ես ձեզ սիրեցի, դուք էլ իրար սիրեցէք»** (Յհ 13.34): Իրար սիրել նշանակում է իրար օգնել, իրար ցաւն եւ ու-

րախուփունը բաժնել, իրար ծառայել:

Աստուած մեզ սիրեց. հետեւաբար, մենք էլ պարտաւոր ենք սիրել Աստծուն, սիրել Նրա եկեղեցին, սիրել մեր նմանին: Քրիստոնէական կեանքի ու վկայութեան առանցքը կազմում է սէրը: Սակայն սէրը ինքնակենտրոն եւ ինքնանպատակ չի կարող լինել: Այն պէտք է բացւի ուրիշին, գնայ ուրիշին եւ վերածի ամբողջանելու ծառայութեան, ինքնազոհողութեան, ինքնընծայման:

Այսպէս եղաւ Քրիստոսի սէրը: Այսպէս պէտք է լինի սէրը Քրիստոսին հետեւելու ուխտը կատարած քրիստոնէայ մարդու համար: Սէրը ծառայութեան վերածել. **«Սէր սէրը թող չլինի միայն խօսքով ու լեզուով, այլ՝ գործով արտայայտուած ճշմարիտ սէր»** (Ա.Յի 3.18): Այս է Քրիստոսի սէրն ու ծառայութիւնը վայելած Առաքելի պատգամը:

Արդ, հարց տանք մեր անձին: Որքանով ներկայ է սէրը մեր կեանքի մէջ. սէր՝ Աստծու նկատմամբ, սէր՝ եկեղեցու, ազգի ու հայրենիքի նկատմամբ, սէր՝ մեր ընտանիքի նկատմամբ, սէր՝ աղքատի, հիւանդի ու զրկեալի նկատմամբ: Որքանով կարողացել ենք սէրը գործնապէս արտայայտել ծառայութեան, նւիրումի, զոհողութեան ու յանձնառութեան միջոցով:

Քրիստոս սիրեց ու ծառայեց. Քրիստոս ծառայեց, որովհետեւ սիրեց: Հետեւաբար, Քրիստոսը սիրել նշանակում է մեր նմանին սիրել. մեր նմանին սիրել նշանակում է ծառայութեան ձեռք երկարել նրան: Չմոռանանք Քրիստոսի խօսքը. **«Քաղցած էի եւ ինձ կերակրեցիք, ծարաւ էի եւ ինձ ջուր տուցիք, օտարական էի եւ ինձ ընդունեցիք, մերկ էի եւ ինձ հագցրիք, հիւանդ էի եւ ինձ խնամեցիք, բանտում էի եւ այցելեցիք ինձ»** (Մտ 25.35-36). եւ ապա Քրիստոսն ակեւացնում է. **«Որովհետեւ իմ այս փոքր եղբայրներից մէկին արեցիք այդ, ինձ արած եղաք»** (Մտ 25.40):

Ինչ որ ուրիշին ենք անում՝ Քրիստոսին արած կը լինենք...: Արդեօք անդրադառնում ենք Քրիստոսի այս խօսքի իմաստին, նպատակին:

Այսօր, մեր եկեղեցին որքան կարիքն ունի իր հաւատացեալների յանձնառու ծառայութեանը:

Այսօր, մեր հայրենիքը որքան անհրաժեշտութիւնն ունի բոլոր հայերի նւիրեալ ծառայութեանը:

Այսօր, մեր ազգը որքան պէտք ունի իր բոլոր զաւաների ամբողջանելու ծառայութեանը:

Թող Բեթլեհեմի պատգամը մղի մեր ժողովրդի բոլոր զաւակներին՝ սէրը ծառայութեան վերածելու:

Այսօր, սփիւռքի մեր կարեւորագոյն գաղութներից՝ Սուրիոյ հայութիւնը տագնապի մէջ է: Երկրի մէջ շարունակուող ապահովական, քաղաքական ու տնտեսական ահաւոր վերվայրումներն իրենց ծանր հետեւանքներն են ունենում նաեւ հայ գաղութի վրայ: Սուրիոյ հայութիւնն անմիջական կարիքն ունի իւրաքանչիւր հայի, մեր բոլորի անվերապահ աջակցութեանը:

Սէր համայնքային կառոյցները պէտք է գործեն, եկեղեցիների կոչնակները պէտք է հնչեն, դպրոցների դռները պէտք է բաց մնան, ընտանիքների սեղանի վրայ հացը պէտք է չէ պակսի, ուսուցիչների ամսաթոշակներն ու աշակերտների կրթաթոշակները պէտք է ապահովւեն: Այս բոլորը կարօտում է նիւթական լայն օժանդակութեան:

Մենք պէտք է թոյլ տանք, որ հայապահպանման, հայրենիքի հզօրացման, հայ ժողովրդի արդար իրաւունքների ձեռքբերման մեր համազգային պայքարի մէջ առանցքային տեղ ու դեր ունեցող մի գաղութ տկարանայ:

Արդ, վերանորոգ հաւատով ու նւիրումով եւ համազգային ճիգով պէտք է շարունակենք մեր անվերապահ օժանդակութիւնը Սուրիոյ մեր եղբայրներին եւ քոյրերին:

Բեթլեհեմի յաւերժափայլ լոյսով ողողւած Աստուածայայտնութեան հոգեպարար տօնին, հայրապետական օրհնութեամբ ողջունում ենք Հայաստանի Հանրապետութեան վսեմաշուք նախագահ տիար Սերժ Սարգսեանին, մաղթելով նրան հայրենանւեր հարուստ գործունէութիւն: Եղբայրական ջերմ սիրով ողջունում ենք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսին, հայցելով Ամենաբարի Աստծուց, որ նրան շնորհի եկեղեցաշէն իրագործումներով լեցուն երկար գահակալութիւն:

Հայրական սիրով ողջունում ենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հոգեւոր խնամքին ենթակա թեմերի առաջնորդ սրբազաններին, հոգեւորական դասին, ազգային իշխանութիւններին, մեր ժողովրդի կեանքի մէջ գործող կառոյցներին եւ մեր ժողովրդի սիրելի զաւակներին: Թող Աստուած միշտ պայծառ պահի մեր սուրբ եկեղեցին եւ հզօր՝ մեր հայրենիքը եւ իր երկնային լոյսով շաղախի մեր ժողովրդի բոլոր զաւակների կեանքի օրերը՝ ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:

6 յունւար, 2013
Անթիլիաս, Լիբանան

ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԱՐԴԱՐՈՎ ԱՐԴԱՐԱՆԱԼ

Ամանոր...ինչպիսի՛ ուրախալի օր:

Պատմութեան գիրկն ենք յանձնում եւս մի տարի, հինը՝ 2012 թւականը: Եթէ կայ հինը, ապա կայ նաեւ նորը՝ Ամանորը: Բայց նորը՝ 2013 թւականը, փաստօրէն հնի շարունակութիւնն է՝ մեր կեանքի շարունակական ճանապարհի վրայ, որ մեզ տանում է դէպի լուսաւոր ապագայ:

Լուսաւոր... նոր յոյսերով, նոր իղձերով եւ նոր երազներով լեցուն:

Լուսաւոր... աւելի արեւոտ, աւելի պայծառ օրերով առլցուն:

Հագար փառք եւ հագար փառք, որ դարձեալ առիթ է տրւում իւրաքանչիւրիս, իւրաքանչիւր մարդու՝ ապրելու աւելի նորոգւած, աւելի ազնիւ, աւելի վեհ ու վսեմ մի կեանք՝ մարդկութեան, սեփական ժողովրդի եւ հայրենիքի բարօրութեան համար:

Նոր տարւայ սեմին, իւրաքանչիւր մարդ պարտաւոր է ճշտել իր նպատակասլաց կեանքի ուղին: Նախ եւ առաջ պէտք է ճանաչել կեանքի նպատակը, որ բնականաբար կօզնի կեանքի իմաստը հասկանանք, իմանանք թէ ինչի՞ համար ենք ապրում: Իբրեւ մարդ որքանո՞վ մեր գոյութիւնը իմաստ ունի: Ինչպէ՞ս եւ ինչո՞վ է իմաստաւորւում մեր կեանքը: Յստակ է, առանց Աստծու, մեր կեանքը նպատակ չունի եւ առանց նպատակի կեանքն իմաստ չի կարող ունենալ: Կեանքի նպատակը ճանաչելով, մեր ապրելաճանաչումը կր պարզանայ: Նպատակը մեզ կօզնի ճշտելու թէ ինչ պէտք է անենք եւ ինչ պէտք չէ անենք: Հասունութիւնը կունենանք ճշտելու թէ՛ ո՞ր գործերը կարեւոր են եւ որոնք՝ անկարեւոր: Երբ որեւէ գործի ձեռնարկենք, մի պահ հարց կը տանք մենք մեզ, թէ «Որքանո՞վ մեր անելիքն իր նպատակին պիտի ծառայի»: Բնականաբար, կը ջանանք ճիշդ ընտրութիւններ կատարել: Պօղոս առաքեալն օգնում է մեզ իր եփեսացիներին ուղղած նամակով. «Ուշադրութիւն դարձրէք ձեր ապրելակերպին: Մի՛ ապրէք անմըտօրէն, այլ՝ իմաստունների նման...: Ուստի անմըտութիւն մի՛ անէք. իմացէ՛ք, թէ ինչ է ուզում Տէրը ձեզանից» (Եփ 5.15-17):

Պատմութեան մէջ ամենից յաջող անձերը,



կամ մարդկային կեանքի մէջ յաճախ բարեփոխութիւններ բերող անձերը նրանք են, ովքեր նպատակասլաց եւ կենտրոնաձիգ կեանք են ապրում: Տէրը ինչ է ուզում մեզանից եթէ ոչ չցրել, չտարածել, ամէն ինչ անելու ետեւից չվազել, այլ ապրել կենտրոնացած կեանք, որ ինքնին նշանակում է արդիւնաբեր կեանք, նպատակասլաց կեանք:

Եկէ՛ք հարց տանք թէ մենք ինչի՞ համար ենք աշխարհ եկել: Կեանքի նպատակը մեզ ի՞նչ բանի համար է պատրաստում: Այո՛, ամենից առաջ, աշխարհ ենք եկել պատրաստելու յաւիտեական կեանքին: Հետեւաբար, պատասխան ենք տալու մեր խօսքերի, մեր մտածումների եւ ընկերային-յարաբերական մեր կեանքի մասին: «Բոլորս էլ կանգնելու ենք Քրիստոսի առեանի առաջ...: Մեզանից իւրաքանչիւրն իր անձի համար հաշիւ է տալու Աստծուն» (Հռ 14.10-12), - ասում է առաքեալը:

Իւրաքանչիւր մարդ պատասխանատու է Աստծու եւ իր նմանի հանդէպ միաժամանակ: Ասուած ինչո՞ւ պատասխանատուութեան է կան-

չում մարդուն. որովհետեւ մարդկութեան բարիքն է ուզում: Յաւիտենութեան պատրաստելու համար, պարտաւոր ենք արդարանալ եւ հաշտել Աստծու հետ: Յաւիտենական կեանքը նւէր կը տրւի զղացող մարդուն: Աստուած սիրով կարդարացնի մեղաւորներին: Որովհետեւ գրեւծ է. «Արդարն իր հաւատով է փրկելու»: Աստուած սիրով կարդարացնի մեղաւորին, որովհետեւ գթում է նրան, իմանալով, որ նա իր միջոցներով չի կարող արդարանալ: Միայն Յիսուս Քրիստոսի միջոցով ենք կարող արդարանալ: «Բոլոր նրանք, ովքեր հաւատում են Յիսուս Քրիստոսին, Աստծու առջեւ արդարանում են առանց խորութեան» (Հռ 3.22), հաստատում է առաքեալը: Այո՛, բոլոր մարդիկ մեղանշել էին եւ գրկել Աստծու փառքից, սակայն Աստուած արդարացրեց բոլոր նրանց, ովքեր հաւատացին Յիսուս Քրիստոսին, հաւատացին Նրա փրկագործութեան խորհրդին եւ Նրա թափած արիւնով սրբւեցին ու մաքրւեցին. «Հիմա, որ հաւատով արդարացած ենք, այլեւս հաշտուած ենք Աստծու հետ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի միջոցով» (Հռ 5.1):

Այս կապակցութեամբ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոսը, մարդկութեան հոգին իր հոգու մէջ փոխադրելով մխիթարում է մեզ, ասելով. «Եկէ՛ք, իմ Հօր օրհնեալներ, եւ ժառանգեցէք այն արքայութիւնը, որ պատրաստուած է ձեզ համար աշխարհի սկզբից ի վեր, որովհետեւ ես քաղցած էի եւ ինձ կերակրեցիք, ծարաւ էի եւ ինձ ջուր տւեցիք, օտարական էի եւ ինձ ընդունեցիք, մերկ էի եւ ինձ հագցրիք, հիւանդ էի եւ ինձ խնամեցիք, բանտում էի եւ այցելեցիք ինձ»: Այն ժամանակ արդարները կը հարցնեն. «Տէր, ե՞րբ տեսանք քեզ քաղցած եւ կերակրեցինք, կամ ծարաւ եւ ջուր տւեցինք: Ե՞րբ տեսանք քեզ օտարական եւ ընդունեցինք, կամ մերկ եւ հագցրինք: Ե՞րբ տեսանք քեզ հիւանդ կամ բանտի մէջ եւ այցի եկանք քեզ»: Թագաւորը կը պատասխանի նրանց. «Ասում եմ ձեզ, որովհետեւ իմ այս փոքր եղբայրներից մէկին արեցիք, այդ ինձ արած եղաք»:

Այս օրերին ականատես ենք լինում աշխարհի մէջ տեղի ունեցող պատերազմների, վայրագու-

թիւնների, ոճրագործութիւնների եւ անմարդկային արարքների, որոնք նոյնիսկ կարելի չէ երեւեկայել եւ նկարագրել: Այսօր մասնաւորաբար Սուրիոյ մէջ լսում եւ տեսնում ենք թէ ինչպէս անմեղ մարդիկ զոհ են գնում, տներ են քանդուում, դպրոցներ են փլուում, ընտանիքներ սկսում են սգալ եւ ցաւել իրենց հարազատների կորստեան պատճառով, ուրիշներ գաղթում են դէպի անծանօթ աշխարհ: Այս բոլորը տեղի են ունենում, որովհետեւ մարդիկ հեռանում են Աստծուց: Նրանց մէջ լուել է խղճի ձայնը, աստուածային սիրոյ զգացումը եւ արդարութեան կանչը: Նրանք ոտից-գլուխ խրել են մեղքի տիղմի մէջ: Ե՞րբ են արդարանալու, ե՞րբ են հաշիւ տալու, ե՞րբ են պատասխան տալու: Մոռանում են, որ մի օր Աստծու դատաստանի առջեւ կանգնած՝ հաշիւ պիտի տան իրենց կատարած բոլոր արարքների համար:

- Արդարով արդարացէք, օ՛ն շտապեցէք, զղացէ՛ք եւ հաւատով արդարացէք: Հաւատով եւ սիրով ապրեցէք ձեր բոլոր օրերը:

Տօնական այս օրերին մեր պարտքն է մտածելու մեր հարազատների ու բարեկամների մասին, մտածելու նաեւ տկարի, հիւանդի, կարօտեալի մասին, ու աղօթելու եւ օգնելու նրանց, որպէսզի Աստուած նրանց քաջառողջ կեանք եւ հոգեկան խաղաղութիւն եւ անդորրութիւն պարգեւի:

Նման հանգրւանում, հարկ է որ յիշենք նաեւ մեր ազգի բոլոր ննջեցեալներին եւ աղօթել նրանց հոգիների խաղաղութեան համար: Նրանք, ովքեր անցեալ տարի մեզ հետ էին ու այսօր չկան: Դրանով մենք առաւել կը գորանանք:

Թող Նոր տարին, աշխարհի համար դառնայ խաղաղութեան, սիրոյ եւ համերաշխութեան տարի: Իսկ հայութեան համար դառնայ ապահովութեան եւ առաւել գոյատեւման ու զարգացման տարի:

Ձերմապէս մաղթում ենք, որ Տէրը Ձեզ պարգեւի քաջառողջ կեանք ու արեւշատ օրեր:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ

21 դեկտեմբեր 2012 Նոր Զուղա

Բարգէն Եպս. Զարեան Առաջնորդ Սպահանի Հայոց Թեմի

ԹՄՉԷԻ ՉՍԷԹՄՉԾÄ օİ àòÃ օ²Ü ØԹ²Î àúÃÆÜ²Ê²ՃՃ ՄՉԷØÆİ ä ú0àèօ²ÛÀ Ûàđ æàò0²Ûàò0

Չորեքշաբթի՝ 2012 թվականի նոյեմբերի 14-ին, Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի հրաւերով, Նոր Զուղա ժամանեց ՀՀ մշակույթի նախարար Յասմիկ Պողոսեանը՝ ընկերակցութեամբ Իրանում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Գրիգոր Առաքելեանի: Երեկոյեան ժամը 5:30-ին, Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան առաջնորդանիստ վանքում հիւրերին ջերմ դիմաւորեցին Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, Ծահիմշահիի հայ համայնքի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, քահանայից դասը եւ Թեմի ազգային մարմինների ներկայացուցիչները:

Առաջնորդարանի Ծաղկեայ դահլիճում տեղի ունեցաւ պաշտօնական հանդիպում նախարարի եւ թեմական առաջնորդ Սրբազան Հօր, հոգեւորականաց դասի, Թեմի Պատգամաւորական Ժողովի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների անդամների, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի եւ միութիւնների ներկայացուցիչների միջեւ:



Սկզբում ծաղիկ տեղադրելով վանքի շրջափակում գտնուող Հայոց Յեղասպանութեան յուշարձանի մօտ՝ տկն. նախարարն ու միւս ներկայներն իրենց յարգանքի տուրքը մատուցեցին անմեղ զոհերի յիշատակին, որից յետոյ հիւրընկալների ուղեկցութեամբ մշակույթի նախարարն այցելեց վանքի Ս. Յովսէփ Արեմաթացի եկեղեցին եւ «Խաչատուր Կեսարացի» թանգարանը, ուր նրան բացատրութիւններ փոխանցեցին եկեղեցու պատմական անցեալի եւ թանգարանում տեղադրած իրերի մասին: Թանգարան կատարած այցելութեան աւարտին տկն. Յակոբեանն իր տպաւորութիւնները գրանցեց բարձրատիճան այցելուների համար նախատեսուած յուշամատենանում:

Հանդիպման սկզբում Սրբազան Հայրն ազգային իշխանութեան եւ միութիւնների անունից բարի գալուստ մաղթեց տկն. նախարարին եւ անդրադառնալով Սպահանի Հայոց Թեմի անցեալին՝ նշեց Թեմի միջոցով իրականացուած մի շարք հայրենանպաստ աշխատանքներ՝ շեշտելով. «Մեր Թեմն առաջիններից է եղել, որ յանձնախումբ կեանքի կոչելով՝ Արցախում վերաբնակեցման ծրագիր է իրագործել եւ ներդրումներ է կատարել Արցախում ու Հայաստանում: Եւ այս բոլոր աշխատանքները կատարել են միայն Հայրենիքի հզօրացման համար»:



Թանգարան կատարած այցելութիւնից յետոյ

Այնուհետեւ նախարար Յասմիկ Պողոսեանը Նոր Զուղայի մասին դրատանքով արտայայտուելով՝ իր տպաւորութիւնները փոխանցեց Ս. Ամենափրկչեան վանքի եկեղեցի եւ թանգարան կատարած այցելութեան կապակցութեամբ: Տկն. Պողոսեանն իր խօսքի շարունակութեան մէջ անդրադառնալով Իրան կատարած իր այցի նպատակներին, որն եղել էր՝ հանդի-

պել Իրանում մշակույթի զարգացման գործում բոլոր դերակատար գերատեսչություններին, բացատրեց, որ մշակութային յարաբերությունների առումով Հայաստանի եւ Իրանի միջեւ դժարություններ չկան ու դրանք զարգանում են իրականացած մի շարք բաւականին գործունեայ ու արդիւնաւէտ ծրագրերի եւ Իրանում ապրող հայ համայնքի ներդրումների շնորհիւ: Տկն. Պօղոսեանը տեղեկություններ փոխանցեց նաեւ վերջին տարիների ընթացքում Հայաստանում իրագործւած մշակույթի ոլորտին առնչող աննախադէպ ծրագրերի կապակցութեամբ:



Նախարար Յասմիկ Պօղոսեանի արտայայտություններից յետոյ, հանդիպումն ընթացաւ տեսակետների եւ յուզող խնդիրների փոխանակմամբ: Հանդիպման աւարտին նախարարին նկիրեց Ս. Ամենափրկչեան Վանքի պատկերով Սպահան քաղաքի ձեռարեւտին պատկանող մի յուշանւէր եւ «Պատմութիւն Նոր Զուղայի» գիրքը՝ ձեռամբ առաջնորդ Սրբազան Հօր եւ Թեմական Խորհրդի ատենապետ պրն. Նոէլ Մինասեանի, իսկ տկն. Պօղոսեանը նույնպէս հայկական թոշնատատերով զարդարւած յուշանւէր եւ մէկ գիրք նկիրեց Թեմին:



Նոյն օրը, երեկոյեան ժամը 7:30-ին, ՀՀ մշակույթի նախարարը, ընկերակցութեամբ դեսպան Գրիգոր Առաքելեանի, Սպահանի Հայոց Թեմի թեմակալ առաջնորդի եւ ազգային մարմինների ներկայացուցիչների, այցելեց Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութիւն, որտեղ մարզաարահում տեղի ունեցաւ ժողովրդական

հանդիպում:

Թեմի ժողովրդի կողմից հիւրերին ջերմ դիմաւորելուց յետոյ, սկիզբ առաւ այս առիթով կազմակերպւած միջոցառումը՝ օրւայ հանդիսավար Նայիրի Թահմազեանի ողջոյնի եւ բարիգալստեան խօսքով: Հանդիսավարի բացման խօսքին յաջորդեցին Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի ատենապետ Նոէլ Մինասեանի արտայայտությունները: Պրն. Մինասեանը Թեմի ազգային իշխանութեան եւ ժողովրդի անունից ողջունելով ՀՀ մշակույթի նախարարի ներկայութիւնը Նոր Զուղայում, անդրադարձաւ Նոր Զուղայի պատմական համայնքի դերակատարութեանը՝ հայ ժողովրդի մշակույթի ասպարէզում եւ ասաց. «Փառք ու պատիւ մեր նախնիներին, ովքեր ժամանակին պետականութիւնից զրկւած, մտածեցին ապաւինել ամենակարեւոր գէնքին՝ մշակոյթին, իրենց գոյութիւնն երաշխաւորելու համար: Նոր Զուղայի հիմնադրման առաջին օրւանից ստեղծել են մշակութային արժէքներ կազմող կոթողներ, որոնք յետագայում ծառայել են մեր ժողովրդի հոգե-մտաւոր զարգացմանը, կրօնական ու ազգային դաստիարակութեանը եւ այսօր ունեն նաեւ համաշխարհային նշանակութիւն ու համբաւ»: Պրն. Մինասեանը ողջունելով Իրանի պետութեան այն աշխատանքները, որոնք կիրառուում են հայկական կոթողները պահպանելու եւ հովանաւորելու համար, ասելացրեց. «Ի տարբերութիւն մեր ժողովրդի թշնամիների՝ Ադրբեջանի եւ Թուրքիայի, որոնք ծրագրւած կերպով ոչնչացնում են հայկական պատմա-մշակութային ժառանգութիւնները, Իրանում մեր պատմա-մշակութային ժառանգութիւնների պահպանման համար պետականօրէն լուրջ ծրագրեր են մշակուում»: Թեմական Խորհրդի ատենապետն իր խօսքի աւարտին ցանկացաւ, որ ՀՀ մշակույթի նախարարութիւնը նույնպէս օգտակար հանդիսանայ, որպէսզի հայ ժողովրդի պատիւը եւ մշակութային արժէքները ներկայացնող համայնքը՝ Նոր Զուղան, իր բոլոր կառոյցներով գտնւի առաւել բարուք իրավիճակում:



Արտայայտեց նաեւ Իրանում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Գրիգոր Առաքելեանը: Նա հպարտութեամբ յայտարարելով, որ հայ-իրանական յարաբերությունները գտնուում են բարձր մակարդակի վրայ,

որը վերաբերում է ո՛չ միայն տնտեսական եւ քաղաքական ոլորտներին, այլեւ՝ մշակութային ոլորտին, ուրախութեամբ թւարկեց վերջին մի քանի օրերի ընթացքում Իրան եւ Հայաստան երկրների միջեւ ստորագրուած մի շարք պայմանագրեր:

Ծրագրի շարունակութեանը, գեղարւեստական բաժնում, գեղեցիկ կատարումներով հանդէս եկան Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Մշակութային Միաւորի «Կոունկ» ասմունքի ու պարի համոյթի եւ էստրադային խմբի անդամներն ու Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երիտասարդական երգչախմբի մենակատարները՝ ղեկավարութեամբ Ռիմա Սիմոնեանի, Արմէն Ամիրխանեանի եւ Նոնա Բախշեանի: Ելոյթ ունեցան «Արարատ» Միութեան էստրադային խմբի անդամներ՝ Նայիրի Ղազարեանը՝ «Երեւան», Լեւիկ Խաչատրեանը՝ «Յիս քու դիմէթն չիմ գիդի» եւ Ս.Ա. Վանքի «Կոմիտաս» երիտասարդական երգչախմբի մենակատարներ՝ Թանհա Մինասեանը՝ «Նոր Հայաստան» եւ Վանա Ծիրանեանը՝ «Հայաստան աշխարհ» երգերով: Ելոյթ ունեցան նաեւ «Կոունկ» ասմունքի խմբի անդամներ՝ Մանհա Ղուկասեանը՝ «Կը գամ», Ալինա Տէր-Սուքիասեանը՝ «Աշխարհումս ախ չիմ քաշի» եւ Լեոնիկ Ծատուրեանը՝ «Հայրենիք» բանաստեղծութիւններով: Իսկ ծրագրի ընթացքում «Կոունկ» պարախումբը ներկայացրեց «Նազանի» եւ «Սայեաթ Նովա» պարային կատարումները:



Գեղարւեստական բաժնին յաջորդեց ՀՀ մշակոյթի նախարար Յասմիկ Պողոսեանի խօսքը: Նա գնահատելով գեղարւեստական կատարումները՝ այսպէս ասաց. «Այս համերգից յետոյ խօսելը շատ դժւար է, քանի որ ինձ մի պահ թւաց, թէ այս համերգը տեղի է ունենում Հայաստանում եւ ո՛չ թէ Նոր Զուղայում: Դա այն երազելի համերգներից էր, որտեղ ուզում ես լսել կենդանի ձայն եւ պարզ ու անկեղծ խօսք ու կատարում՝ առանց ձեւականութեան»: Տկն. Պողո-

սեանն արտայայտեց Նոր Զուղայի մասին եւ անդրադառնալով նոր-ջուղացիների դերակատարութեանը՝ հպարտեց եւ իրանական պատմութեան մէջ, ներկաներին մի շարք տեղեկութիւններ փոխանցեց Իրան կատարած իր պաշտօնական այցի նպատակների եւ ձեռքբերումների կապակցութեամբ: Նա իր խօսքի աւարտին ցանկացաւ, որ Իրանի Իսլամական Հանրապետութիւնը միշտ լինի խաղաղութեան մէջ եւ Հայաստանի Հանրապետութեան անունը միշտ օրհնեալ լինի:



Որպէս եզրափակիչ խօսք, իր հայրական օրհնանքը փոխանցեց Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը: Սրբազան Հայրը ողջունելով ՀՀ մշակոյթի նախարարի ներկայութիւնը Նոր Զուղայում, այսպէս արտայայտեց. «Նոր Զուղան իր մշակոյթով, 400-ամեայ պատմութեամբ, սրբութիւններով ու արժէքներով պատկանում է ո՛չ միայն իրանահայութեանը, այլեւ՝ ողջ հայութեանը, եւ ողջ հայութիւնը հպարտանում է այս սրբութիւններով ու արժէքներով: Եւ մենք որպէս մեր նախնիների ժառանգորդներ, պարտականութիւն ունենք այս բոլորի տէրն ու պաշտպանը լինելը»: Սրբազան Հայրն իր խօսքի աւարտին ուրախութիւն յայտնելով ՀՀ մշակոյթի նախարարի Նոր Զուղա կատարած այցի կապակցութեամբ, ասաց. «Այս Թեմում բազմաթիւ աշխատանքներ են կատարւում Հայաստանի եւ Հայաստանի պետականութեան հզօրացման համար, որպէսզի Հայաստանը եւ հայ ժողովուրդը ապրի ու յաւերժ ապրի»:

Ժողովրդական հանդիպմանը յաջորդեց հիւրերի պատուին կազմակերպուած ընթրիք-երեկոն, որը տեղի ունեցաւ Ս. Ամենափրկչեան Վանքում:

ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Հինգշաբթի՝ 2012 թականի դեկտեմբերի 20-ի առաւօտեան ժամը 11:30-ին, ծանօթացման նպատակով, Ս.Ա. Վանք այցելեցին Սպահանի շրջկենտրոնի նորանշանակ ընդհանուր ոստիկանապետ գնդապետ Եարդուսթին եւ Սպահանի 5-րդ շրջանի քաղաքապետ պրն. Ասաոզադեգանը, մի քանի այլ գործակիցների ընկերակցութեամբ: Հանդիպումը կայացել էր ոստիկանապետի ցանկութեամբ:



Պետական հիւրերն ընդունելութիւն գտան Ս.Ա. Վանքի Ծաղկեայ դահլիճում, որոնց դիմաւորեցին թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, Իրանի Իսլ. Խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր պրն. Ռոբերտ Բեգլարեանը, Սպահանի Հայոց Թեմի Պատգամաւորական Ժողովի դիւանի ատենապետ պրն. Աշոտ Դաւթեանը եւ Թեմական Խորհրդի ատենապետ. պրն. Նոէլ Մինասեանը:



Գերշ. Սրբազան Հայրն սկզբում բարիգալստեան խօսքի հետ շնորհաւորանքներ փոխանցեց նորանշանակ ոստիկանապետին եւ իր ուրախութիւնը յայտնեց պատիրակութեան այցելութեան առթիւ: Պրն. Ռոբերտ Բեգլարեանը յիշեցնելով ոստիկանութեան նախկին ղեկավարութեան հետ ունեցած սերտ համագործակցութեան եւ յարաբերութիւնների մասին, շեշտեց, որ անվտանգութեան եւ ապահովութեան իմաստով մեր ունեցած հարցերին նրանք վերահասու են եղել եւ լաւապէս լուծումներ տուել: Պրն. Բեգլարեանը յոյս յայտնեց, որ նոյն ընթացքը, առաւել սերտ կերպով, շարունակելու է գնդապետ Եարդուսթի գործունէութեան ժամանակ եւս:

Թեմական խորհրդի ատենապետ պրն. Մինասեանը պատիրակութեանն ընդհանուր տեղեկութիւններ փոխանցեց Ազգային Առաջնորդարանի վարչական դրածքի եւ Նոր Զուղայի շրջանի ներքին կարգավիճակի մասին, իսկ գնդապետ Եարդուսթին շրջանի անվտանգութեան վերաբերեալ տարւող աշխատանքների մասին ընդհանուր լուսաբանական բացատրութիւններ հաղորդեց:



Պատիրակութեան անդամներն Ամանորի կապակցութեամբ նախօրօք իրենց շնորհաւորանքները փոխանցեցին առաջնորդ Սրբազան Հօրը, ազգային իշխանութեանը եւ Նոր Զուղայի հայ համայնքին:

Հանդիպման աւարտին, Առաջնորդարանի կողմից, իբրեւ յուշանէր, պատիրակութեան բոլոր անդամներին յանձնեց Ահմադ Նուրիզադէի պարսկերէնով հեղինակած «Հայաստանի պատմութիւնն ու մշակոյթը» գիրքը: Հրաժեշտ տալուց առաջ, հիւրերն ու հիւրընկալները Ս.Ա. Վանքի «Խաչատուր Կեսարացի» թանգարանի առջեւ լուսանկարուեցին:



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԵՐԻ ԱՄԻՍ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ

2012 թվականի դեկտեմբեր ամսւայ ընթացքում նշող եկեղեցական տօները յատուկ նշանակութիւն ունէին Նոր Զուղայի հայորդիների համար: Սոյն ամսում ոգեկոչող որոշ սուրբերի անունով Նոր Զուղայում կան եկեղեցիներ, որոնց անանակոչութեան տօնն է միաժամանակ:

- Ծաբաթ՝ դեկտեմբերի 1-ին, Հայաստան աշխարհի առաջին լուսաորդիներ Ս. Թադէոս եւ Ս. Բարդուղիմէոս առաքելների տօնին, երեկոյեան ժամը 5:30-ին, սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց Ս. Գէորգ եկեղեցում: Պատարագիչն էր արժն. Ս. Վաղինակ ա. քինյ. Ծահիջանեանը, իսկ Պատարագի երգեցողութիւնը կատարեց Ա.Ա. Վանքի «Տաթեւ» երգչախումբը: Ներկայ էին հոգեւորականաց դասը եւ Ս. Պատարագին նախագահում էր Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Ս. Բաբգէն եպս. Զարեանը: Առաջնորդ Սրբազան Հայրն իր քարոզի մէջ անդրադառնալով Քրիստոսի Իր առաքելներին տւած պատւիրանին՝ ամբողջ աշխարհում քարոզելու Իր վարդապետութիւնը, ասաց. «Քրիստոսի աշակերտներից երկուսը՝ Ս. Թադէոս եւ Ս. Բարդուղիմէոս առաքելները, որպէս երանելի սուրբ սպասաւորներ եւ վկաները Աստուծորդու, իրենց խօսքի ուժով մտան ամէն յարկի ներս, թագաւորական պալատներից սկսած մինչեւ գիւղերի ամենայնտին խրճիթը, քարոզելով՝ կուսակալութեան խաւարը վանեցին եւ աստուածգիտութեան յոյսը տարածեցին Հայաստան աշխարհի մէջ: Երկու առաքելներն ապրեցին Քրիստոսով եւ Քրիստոսի հետ: Նրանցով էր, որ մեր եկեղեցին կոչւեց Առաքելական: Զոյգ լուսաւորիչների միջոցով քրիստոնէական սերմերը ցանկեցին Հայաստանի մէջ եւ հետզհետէ ծլարձակեցին, պտղաբերեցին եւ շուտով Հայաստան աշխարհը վերածեցին քրիստոնէական պտղատու ծառերի ընդարձակ մի պարտէզի: Եւ նրանց արիւնով է, որ շողախեցին ու զօրացան Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հիմերը: Այսօր եւս այդ առաքելական գործը չի դադարել, այլ շարունակուում է, այս անգամ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջոցով, որովհետեւ Ս. Թադէոս եւ Ս. Բարդուղիմէոս առաքելներն իրենց նահատակութեամբ, մեր եկեղեցու առաքելականութիւնն իբրեւ կտակ եւ առաքելութիւն մեզ թողեցին: Նրանց յիշատակի ոգեկոչումը թանկագին մի առիթ է, որ մենք մէկ անգամ եւս անդրադառնանք նրանց թողած կտակին՝ վերանորոգել մեր հաւատը՝ ի խնդիր աստուածային ճշմարտութիւնների եւ սրբազան արժէքների, որոնց համար նրանք չարչարեցին, պայքարեցին եւ նահատակեցին, վերալուսաւորել եւ վերագօրանալ, որպէս քրիստոնէայ եւ որպէս հայ»:

- Երեքշաբթի՝ դեկտեմբերի 4-ի առաւօտեան, Քրիստոսին հաւատացող մեր անդրանիկ թագաւորի՝ Ս. Աբգարի տօնին, Նոր Զուղայի Ս. Աստուածածին

եկեղեցում մատուցեց սուրբ եւ անմահ Պատարագ՝ նախագահութեամբ Ծահիջանի հայ համայնքի հոգեւոր հովիւ հոգշ. Ս. Անանիա վրդ. Գունանեանի: Պատարագիչն էր արժն. Ս. Խաչատուր քինյ. Զարգարեանը, իսկ երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենակրկեան Վանքի «Կոմիտաս» երգչախումբը:

Արարողութեանը ներկայ էին նաեւ քահանայից եւ դպրաց դասերը, Կրօնական Խորհրդի եւ Նոր Զուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութեան ներկայացուցիչները եւ հաւատացեալներ:

Յընթացս արարողութեան, յանուն առաջնորդ Սրբազան Հօր, Ծահիջանի հայ համայնքի հովիւ հոգշ. Ս. Անանիա վրդ. Գունանեանը ողջունեց Մանկապարտէզի եւ Նախակրթարանի աշակերտներին, ուսուցչական կազմին եւ Ծնողական Խորհրդին, ովքեր ըստ աւանդութեան ամէն տարի ներկայ են լինում Ս. Աբգար թագաւորի տօնի արարողութեանը՝ Աբգարեան գերդաստանի ննջեցեալների յիշատակը ոգեկոչելու, որովհետեւ Ս. Աստուածածին եկեղեցու շրջափակում Աբգարեանների միջոցով հիմնել է առաջին դպրոցը՝ մանուկների դաստիարակութեան համար:



Ս. Պատարագի ընթացքում յատուր պատշաճի քարոզեց հոգշ. Հայր Սուրբը, ով սկզբում կարեւորութեամբ ընդգծեց Աբգար թագաւորի կեանքն ու ամուր հաւատը, այնուհետեւ անդրադառնալով հաւատի զօրութեանը՝ այսպէս շարունակեց. «Այսօր մեր կեանքը հիմնւած է հաւատի վրայ: Եթէ մեր հաւատն ուժեղ է Քրիստոսի նկատմամբ, դա նշանակում է, որ մենք սիրում ենք Քրիստոսին, եւ Քրիստոսի հանդէպ ունեցած մեր սէրն ապացուցում է, որ հետեւում ու վստահում ենք Աստծուն»: Հայր Սուրբն իր քարոզի շարունակութեան մէջ խօսելով Աստծու եւ Քրիստոսի կարողութեան ու զօրութեան նկատմամբ մարդու ունեցած վստահութեան մասին եւ անդրադառնալով Ս. Աբգար թագաւորի Քրիստոսի հանդէպ ունեցած վստահութեանը, թէ ինչպէս մի նամակով խնդրեց Քրիստոսին բժշկել իրեն ու իր պալատականներին, յորդորեց, որ մեր առօրեայ կեանքում մարդ արարածին վստահելու փոխարէն վստահենք Աստծուն եւ Քրիս-

տոսին, քանզի նրանք են մեզ առաջնորդելու դէպի լույսի ճանապարհ եւ հոգու, սրտի ու մտքի առողջութիւն:



Հոգշ. Հայր Սուրբն իր քարոզի մէջ անդրադարձաւ նաեւ Աբգարեան տոհմի դերակատարութեանը եւ սերունդների դաստիարակութեան գործում նրանց թողած աւանդին, Մանկապարտէզ-Նախակրթարանի աշակերտութեանը յորդորեց դառնալու մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի արժանի բարեկամները իսկ նրանց պատասխանատուներին մաղթեց ուժ եւ կորով՝ շարունակելու իրենց առաքելութիւնը:

Ս. Պատարագի ընթացքում Մանկապարտէզ-Նախակրթարանի սաներն ու ներկայ ժողովուրդը Ս. Հաղորդութիւն ստացան, իսկ արարողութեան աւարտին տեղի ունեցաւ Հոգեհանգստեան պաշտօն:



Այնուհետեւ Նոր Զուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութեան կողմից գեղեցիկ փաթեթաւորմամբ մրգեր նկրեցին եկեղեցում ներկայ երեխաներին: Սույն մրգերի պատրաստման աշխատանքն ինչպէս նախորդ տարիները կատարել էր Նոր Զուղայի Հայոց Ազգային Մանկապարտէզ-Նախակրթարանի Ծնողական Խորհուրդը: Վերջում եկեղեցու սրահում տեղի ունեցաւ հիւրասիրութիւն՝ կազմակերպութեամբ Նոր Զուղայի Հայոց Առաքելական Եկեղե-

ցեաց Վարչութեան:

- Ծաբաթ՝ դեկտեմբերի 8-ին, Նոր Զուղայի Ս. Նիկողայոս եկեղեցում, նույնանուն սուրբի տօնին, Ս. Պատարագ մատուցեց արժն. Տ. Վարդան քինյ. Աղաբաբայեանի միջոցով: Պատարագի երգեցողութիւնը կատարում էր «Շուշանիկ» երգչախումբը: Ներկայ էին հոգեւորականաց դասը եւ արարողութեանը նախագահում էր առաջնորդ Սրբազան Հայրը:

Շահինշահիի հայ համայնքի հովիւ հոգշ. Տ. Անահիա վրդ. Գունանեանը քարոզի պահին խօսեց Ս. Նիկողայոս Հայրապետի կեանքի մասին եւ անդրադարձաւ հաւատի կարեւորութեանը: Յանուն առաջնորդ Սրբազան Հօր շնորհաւորեց եկեղեցու հովիւն, Եկեղեցեաց Վարչութեանը, եկեղեցու երէցփոխներին, տիկնաց յանձնախմբին, մաղթելով նրանց արեւշատ օրեր եւ ուժ ու եռանդ՝ շարունակելու իրենց գործը՝ եկեղեցին բարեզարդ պահելու եւ առաւել պայծառացնելու:



Ս. Պատարագի աւարտին, առաջնորդ Սրբազան Հօր գլխավորութեամբ տեղի ունեցաւ Զրօրհնէք՝ Ս. Նիկողայոս Հայրապետի աջ-մասունքով, որից յետոյ, տիկնաց յանձնախմբի միջոցով տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եկեղեցու շրջափակում:

- Երկուշաբթի՝ դեկտեմբերի 10-ին, Ս. Մինասի տօնի առթիւ, Ս. Մինաս եկեղեցում տեղի ունեցաւ եկեղեցական արարողութիւն: Պատարագիչն էր եկեղեցու հովիւ արժն. Տ. Վաղինակ աւ. քինյ. Շահիջանեանը, իսկ երգեցողութիւնը կատարում էր Ս.Ա. Վանքի «Կոմիտաս» երգչախումբը: Ներկայ էր հոգեւորականաց դասը: Առաջնորդ Սրբազան Հայրը նախագահեց արարողութեանը եւ լընթացս Ս. Պատարագի իր պատգամն ուղղեց ժողովրդին: Սրբազան Հայրը խօսեց սուրբ Մինասի կեանքի մասին եւ նրա կեանքի ընդմիջից անդրադարձաւ հաւատի վկայութեան կարեւորութեանը: Նա ողջունեց եկեղեցու հովիւն, Եկեղեցեաց Վարչութեանը, եկեղեցու երէցփոխներին, տիկնաց յանձնախմբին, մէկ խօսքով՝ բոլոր նրանց՝ ուլքեր ծառայում են եկեղեցու պայծառացման եւ բարեզարդման համար:

Պատարագի աւարտին կատարեց Զրօրհնէքի արարողութիւն, որից յետոյ եկեղեցու սրահում տեղի

ունեցաւ հիւրասիրութիւն եւ գեղարեստական յայտագիր:

- Ծաբաթ՝ դեկտեմբերի 10-ին տօնն էր Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետի, որը միաժամանակ տօնն էր Նոր Զուղայի Ս. Յակոբ եկեղեցու անանակոչութեան, որտեղ մատուցեց սուրբ եւ անմահ Պատարագ: Պատարագիչն էր Թեհրանի Հայոց Թեմի առաջնորդի օգնական հոգշ. Տ. Մակար վրդ. Աշգարեանը: Ս. Պատարագին երգեց «Ծուշանիկ» երգչախումբը, ներկայ էր հոգեւորականաց դասը եւ նախագահում էր առաջնորդ Սրբազան Հայրը:



Քարոզի պահին պատարագիչ Հայր Սուրբը ներկայացրեց Ս. Յակոբ կեանքի կարեւորագոյն գծերը եւ յատկապէս շեշտեց քաջ եւ բարի հովի դերակատարութիւնը, նշելով, որ իսկական հովիւը նա է՝ ով ճանաչում է իր հօտին եւ ներս է մտնում մայր դռից եւ որին ճանաչում են նաեւ իր հօտի անդամները: Այս անգամ եւս Ս. Պատարագի աւարտին տեղի ունեցաւ Զրօրի-ճէք, իսկ եկեղեցու սրահում՝ հիւրասիրութիւն:



- Երեքշաբթի՝ դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոս Նախավկայի տօնի օրը, որը նոյնպէս համընկնում էր Նոր Զուղայում նոյնանուն եկեղեցու անանակոչութեան տօնին, սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց Ս. Ստեփանոս եկեղեցում, ձեռամբ Ծախինշահիի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանի: Արարողութեանը նախագահում էր Սպահանի Հայոց

Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանը:



Այդ օրը համարում է նաեւ սարկաւազների տօնը, որի պատճառով արարողութեանը ներկայ էին Նոր Զուղայի եւ Ծախինշահիի եկեղեցիների սարկաւազները, ովքեր արարողութեան ժամանակ, քարոզի պահին եկեղեցու բեմ բարձրացան եւ իրենց ձեռքերում լուսաւորած մոմեր բռնած՝ կանգնեցին պատարագիչ Հայր Սուրբի երկու կողմերում:



Յատուր պատշաճի քարոզ ներկայացրեց հոգշ. Հայր Սուրբը: Նա իր քարոզի ընթացքում անդրադարձաւ Ս. Ստեփանոս Նախավկայի անձի եւ գործունէութեան մասին, յորդորեց սարկաւազներին՝ օրինակ վերցնել քրիստոնէայ առաջին մարտիրոսից՝ իրենց կեանքն ընծայելով ճշմարտութեան քարոզութեանն ու հաւատի պաշպանութեանը:



Շարունակութիւն՝ 15-րդ էջում

ՀԱՅ ՈՒՍՈՒՑՉԻ ՄԵՏԱՐՄԱՆ ԵՐԵԿՈՅ՝

ՄՂԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԻ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ

Նախաձեռնությամբ Սպահանի Հայոց Թեմի Կրթական Խորհրդի, նոյեմբերի 15-ի երեկոյան ժամը 6:00-ին, նշեց Հայ Ուսուցչի տօնը, Նոր Զուղայի Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալեմուշ Տէրեան» սրահում: Ծրագրին ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարբաղեան Եպս. Զարեանը, Ծափինշահրի հայ համայնքի հոգետր հովի հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, Թեմական, Կրթական եւ Կրթական խորհուրդների ներկայացուցիչները, քահանայ հայրեր եւ Նոր Զուղայի ու Ծափինշահրի հայոց դպրոցների հանգստի կոչւած եւ աշխատող հայ տեսուչները, ուսուցիչները եւ գրասենեակների պատասխանատուները:

Երեկոն բացւած յայտարարեց «Խոնհարում եմ ձեր առջեւ» բանաստեղծությամբ, որն արտասանեց օրւայ հանդիսավար Գայիանէ Եղիազարեանը:

նում, այլ ուսուցիչ ծնւում են, եւ քանի որ դուք ապրում էք այդ կոչումով, թող Բարձրեայր ձեզ շնորհի ուժ, կորով, անասան կամք եւ հաւատ: Ձեր աշխատանքը պէտք է գնահատւի տասնամեակներ, քանի որ ձեր կրթած սերունդն ապրում եւ յիշում է Ձեզ»:



Այնուհետեւ հանդիսավարը ողջունելով ներկաներին, շնորհաւորեց առիթի կապակցությամբ եւ ասաց. «Ուսուցչի տօնը մեծ խորհուրդ եւ իմաստ ունի. այն հոգեհարազատ է իւրաքանչիւրին, ով կրթել, դաստիարակել եւ ձեւաւորել է դպրոցում, որովհետեւ բոլոր ժամանակներում էլ ուսուցչին է վերապահւած մեր գրագէտ սերնդի ձեւաւորման կարեւորագոյն առաքելութիւնը, որը կրում են անարտունջ սիրով ու նւիրումով»:

Այնուհետեւ Կրթական Խորհրդի ատենապետ պրն. Զանսոն Աղաբաբայեանը խօսեց օրւայ առթիւ եւ ասաց. «Այսօր հպարտութեան եւ երախտագիտութեան խօսքի առիթ է ընձեռնւել, որ հպարտանանք միասին եւ գնահատենք մեր պատմական համայնքի սերունդներին ելած այն խաւին, որն իր էութեամբ էջերն է գարդարել մեր սփիւռքեան հայ քաղաքակիրթ պատմութեան մէջ»: Նա նշելով կրթա-դաստիարակչութեան ոլորտի կարեւորութիւնը եւ այն բոլորը, որոնք անհրաժեշտ են առաջատար ու զարգացած լինելու համար, այսպէս շարունակեց. «Ուսուցիչ չեն դառ-

Ծրագրի գեղարեստական բաժնում երգեցին Վեհանուշ Աւետումեանը՝ «Հովիկ», Զարեանուշ Աղուրեանը՝ «Ալվան վարդեր», Նոռա Աղախանեանը՝ «Մայրիկ», Անդրէ Խաչատրեանը՝ «Սիրելի ուսուցիչ», Արուսթին Հախնազարեանը՝ «Զինորի երգը», Վանա Ծիրանեանը՝ «Հայրենիք» եւ Թանհա Մինասեանը՝ «Նոր Հայաստան» երգերը: Իսկ ասմունքեցին՝ Վանանդ Իսաղուլեանը՝ «Իմ անգին լեզու», Մեղրի Ղուկասեանը՝ «Նոյի ազուաներին» եւ Լաւրա Խուրաբախշեանը՝ «Մասիսների լեգեները» բանաստեղծութիւնները: Այս բաժինն եզրափակեց «Մենք ենք մեր սարերը» զուգերգով՝ Թանհա Մինասեանի եւ Վանա Ծիրանեանի կատարմամբ: Բոլոր կատարումները նկրւեցին ուսուցիչ-ուհիներին եւ գնահատւեցին նրանց կողմից:





Թանքներ տւեցին ձեզ, սիրելի՛ ուսուցիչներ: Դուք, Մաշտոցի յաւերժական պաշտօնակիցներն էք, յոյս եւ հաւատ ներշնչող առաքեալներ»:

Առաջնորդ Սրբազան Հօր, Թեմական եւ Կրթական խորհուրդների աստեճապետներ Նոէլ Մինասեանի եւ Զանսոն Աղաբաբայեանի միջոցով հանգստի կոչւած եւ աշխատող տեսուչներին եւ ուսուցիչներին յանձնեցին յուշանւէրներ, իսկ առանձին գնահատուեց նախորդ տարեշրջանում հանգստի կոչւած ուսուցչուհի Անահիտ Կիրակոսեանը: Գնահատուեց նաեւ Կրթական Խորհրդի գրասենեակի պատասխանատու Մադլեն Ղարիբեանը: Վերջում Կրթական Խորհրդի աստեճապետին յանձնեց Գլխնդելում «Քանաճեան», «Կատարիճեան» եւ «Արմէն» դպրոցների ամեակների ոգեկոչման յանձնախմբի կողմից պատրաստուած մեդալը:



Թեմակալ առաջնորդն իր խօսքի աւարտին անդրադառնալով հայ տպագրութեան 500-ամեակին եւ «Հայ Գրքի Տարւան», ատելացրեց. «Որպէս ուսուցիչներ, պարտաւոր էք ձեր իմացածն ընթերցանութեան ճամբով աւելացնել, հարստացնել եւ լիցքաւորել, որպէսզի կարողանանք ձեր աշակերտներին փոխանցել այն ինչ մեր պարտականութիւնն է: Դուք այսօր առաքեալներ էք, ինչպէս Յիսուսի աշակերտները, ովքեր առաքեցին՝ քարոզելու եւ պատգամելու այն ամէնը, ինչ Քրիստոսը՝ որպէս վարդապետ, իրենց սովորեցրեց: Ուսուցիչ դառնալը դիւրին չէ, սակայն հայ ուսուցիչ դառնալն աւելի՛ դժւար է, որովհետեւ նրա ուսերի վրայ աւելի ծանր պարտականութիւն է դրւած: Հայ ուսուցիչը սոսկ գիտութիւն փոխանցելու պարտականութիւն չունի, այլ նրա առաքելութիւնն է հայեցի ոգի ներշնչել մեր սերունդների մէջ»:



Որպէս եզրափակիչ խօսք՝ արտայայտուեց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանը, ով ուսուցիչների ներկայութեամբ խօսելը մեծ ուրախութիւն համարելով՝ այսպէս ասաց. «Դուք ամէն օր դասարանում, խօսում եւ դասաւանդում էք ձեր աշակերտներին, սակայն այսօր գտնւելով լսողի դերում՝ ունկնդրեցիք ձեր աշակերտների ելոյթները, ովքեր բեմի վրայ երգեցին, արտասանեցին եւ բարի մաղ-




ՀՈԳԵՒՈՐ-ԿՐՕՆԱԿԱՆ ԳՐՔԵՐԻ ԵՐԿՕՐԵԱՅ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ-ՎԱՃԱՌՔ



Հովանաւորութեամբ Սպահանի Հայոց Թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանի եւ նախաձեռնութեամբ Հայաստանեաց Առաքելական Սուրբ Եկեղեցու Նոր Զուղայի Կիրակնօրեայ Դպրոցի, հինգշաբթի եւ ուրբաթ՝ դեկտեմբերի 6-ին եւ 7-ին, Նոր Զուղայի Կիրակնօրեայ Դպրոցի շէնքի սրահում կայացաւ հոգեւոր-կրօնական գրքերի երկօրեայ ցուցահանդէս-վաճառք՝ նկիրած «Հայ Գրքի Տարւան»:

Սույն ցուցահանդէս-վաճառքի բացման արարողութիւնը տեղի ունեցաւ հինգշաբթի՝ դեկտեմբերի 6-ի երեկոյեան ժամը 6:00-ին, որին Նոր Զուղայի Կիրակնօրեայ Դպրոցի պատասխանատուներից, սաներից եւ ծնողներից բացի, ներկայ էին թեմակալ առաջնորդը, Ծափնշահրի հայ համայնքի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, քահանայից դասը, Թեմական եւ Կրօնական խորհուրդների, Նոր Զուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութեան, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի, հայոց ազգային դպրոցների ու միութիւնների ներկայացուցիչները:

Թեմակալ առաջնորդի ձեռամբ ժապաւէնի հատու մից յետոյ, ներկաները մուտք գործեցին սրահ: Բացման խօսքով հանդէս եկաւ Նոր Զուղայի Կիրակնօրեայ Դպրոցի տեսչուհի Դեզիրէ Մկրտչեանը: Նա մէջբերելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի «Հայ Գրքի Տարւան» առնչող սրբատառ կոնդակից մի հատուած, ասաց. «Պօղոս առաքեալն իր աշակերտ Տիմոթէոսին գրում է՝ Աստուծոյ ներշնչութեամբ գրած բոլոր Սուրբ Գրքերն օգտակար են թէ՛ ճշմարտութիւնն ուսուցանելու եւ թէ՛ սխալը հերքելու, մարդուն ճիշտ ճանապարհի վրայ դնելու եւ արդար կեանքի դաստիարակութիւնը տալու համար, որպէսզի Աստուծոյն նւիրուած մարդը լինի կատարեալ եւ պատրաստ ամէն տեսակ բարի գործեր կատարելու»:



Տկն. Մկրտչեանի խօսքին յաջորդեց առաջնորդ Սրբազան Հօր պատգամը: Թեմակալ առաջնորդն իր ուրախութիւնը յայտնեց հոգեւոր-կրօնական գրքերի ցուցահանդէսի բացումը կատարելու համար եւ անդրադառնալով «Հայ Գրքի Տարւայ» առթիւ Սպահանի Հայոց Թեմում իրականացած միջոցառումներին, այսպէս շարունակեց. «Վեհեփառ Հայրապետն իր կոնդակում շատ գեղեցիկ կերպով անդրադարձել է գրքին ու տպագրութեանը, ի մասնաւորի՝ հայ գրքին»:

առնչող պատմութեանը եւ մեր թեմերի ու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան աշխատանքներին ու հրատարակութիւններին՝ հայ գրքի առնչութեամբ: Ուրախութեամբ պէտք է ասեմ նաեւ, որ 1637 թվականին Խաչատուր վրդ. Կեսարացու միջոցով Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան Վանքում հիմնադրուած Միջին Արեւելքի առաջին տպարանում հրատարակուած առաջին գիրքը՝ Սաղմոսարանը, կրօնական գիրք է»:

Առաջնորդ Սրբազան Հայրն իր խօսքի ասարատին Գերկայացրեց Թեմի Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհրդի նախաձեռնութեամբ եւ Կրօնական Խորհրդի հովանաւորութեամբ «Հայ Գրքի Տարւայ» առթիւ վերջերս լոյս տեսած երկու գրքեր «Վանք Հոգեւոր Մատանաշար»-ից՝ «Ինչպէս խօսել Աստծու հետ» մանկական գունազարդ գիրքը, որը պարզ եւ բոլորին հասկանալի լեզուով բացատրում է Տէրունական Աղօթքի իմաստը, նաեւ «Սուրբ Պատարագի Արարողութիւն» գիրքը, որը Ս. Պատարագի գրաբար լեզւի կողքին բովանդակում է նաեւ աշխարհաբար

թարգմանութիւնը:

Սրբազան Հօր պատգամից յետոյ, Գերկաներն առիթ ունեցան մօտիկից դիտելու տարբեր տարիքային խմբաւորումներին առնչող հոգեւոր եւ կրօնական գրքեր եւ կից սրահում ցուցադրուած Կիրակօրեայ Դպրոցի սաների ձեռքի աշխատանքները:



Ցուցահանդէս-վաճառքի բացման հանդիսութիւնն ասարտեց ընդունելութեամբ, իսկ ձեռնարկը շարունակեց մինչեւ յաջորդ օրը՝ ուրբաթ երեկոյեան ժամը 8:00-ը:

Շարունակութիւն 11-րդ էջից

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԵՐԻ ԱՄԻՍ...

Հոգ2. Հայր Սուրբն իր խօսքում կարեւորութեամբ շեշտեց. «Նայելով Ս. Ստեփանոսի անձին եւ գործունէութեանը, կարեւորագոյն կէտը, որ մենք ուզում ենք շեշտել ու մատնանշել որպէս օրինակ մեր եկեղեցու մէջ եւ Ս. Խորանի վրայ ծառայող սարկաւազներին, ծառայութեան գիտակցութիւնն է... Այսօր՝ Ս. Ստեփանոսի տօնին, մեր մէջ կրկին անգամ արթնանում են ծառայութեան առաքելութիւնը, հաւատի կայունութիւնը, Աստծու հանդէպ վստահութեան գաղափարը եւ մանաւանդ Աստծու եկեղեցու եւ ժողովրդի նկատմամբ մեր սէրը: Ս. Ստեփանոսն առաջին հերթին սիրեց Աստծուն, վստահեց եւ Աստուծ աւելիով նրա հաւատը զօրացրեց»:

Հոգ2. Հայր Սուրբն իր խօսքն ուղղելով սարկաւագներին, ատելացրեց. «Միրելի՛ սարկաւագներ, Ս. Ստեփանոսը միայն տարին մէկ անգամ իբրեւ տօն պէտք չէ լինի ձեզ համար. դուք ուխտել էք Ս. Խորանի առաջ մշտապէս լինել ծառայասէր, հաւատարիմ եւ մանաւանդ խոնարհ: Սարկաւագ լինելը իսկապէս մեծ առաւելութիւն եւ շնորհք է՝ տրուած ձեզ. դուք կոչւել էք առաջին հերթին իբրեւ սպասարկող Աստծուն եւ Ս. Սեղանին, ապա մեր ժողովրդին՝ հոգալով նրանց կարիքները եւ օգնութեան հասնելու կարօտեալներին, այնպէս ինչպէս վարեց Ս. Ստեփանոս Նախավկան»:

Ս. Պատարագի ասարտին բեմ բարձրացաւ հոգեւորականաց դասը եւ առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Ս. Ստեփանոսի աջ-մասունքով կատարեց Զորհմէքի արարողութիւն:

Եկեղեցական արարողութիւնից յետոյ, Ս. Ստե-

փանոս եկեղեցու սրահում, եկեղեցու բարեգարդման կանանց յանձնախումբը եւ Նոր Զուղայի Հայց Առաքելական Եկեղեցեաց Վարչութիւնը կազմակերպել էին հիւրասիրութիւն, որի ընթացքում, սարկաւագների կողմից սրտի խօսքեր արտասանեցին բոլրին. Ռազմիկ սրկ. Գալստանեանն ու բոլրին. Հրայր սրկ. Մինասեանը: Սարկաւագներին իրենց տօնի առթիւ շնորհաւորանքներ փոխանցեցին արժն. Տ. Մեսրոպ քհնյ. Գալստանեանը եւ Եկեղեցեաց Վարչութեան անդամներից: Հիւրասիրութեան ընթացքում իրենց հանձնարարութեամբ առաւել ջերմութիւն հաղորդեցին սարկաւագներ Զանի Ղազարեանն ու Հրայր Մինասեանը: Առաջնորդ Սրբազան Հայրն իր հաշրական խօսքը փոխանցեց, շեշտելով, որ տիրացուների կոչումն է առաւել խոնարհութեամբ, մաքրութեամբ եւ ամենայն պատասխանատւութեամբ սպասարկել Ս. Սեղանին, ծառայել Աստծուն, եկեղեցուն եւ եկեղեցու հաւատարոք զաւակներին:



Վերջում գերշ. Սրբազան Հայրը Եկեղեցեաց Վարչութեան միջոցով պատրաստուած նւէրներ յանձնեց սարկաւագներին:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԷՍՕՐԵԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ



Սպահանի Հայոց Թեմի Քրիստոնեական Դաստիարակութեան Խորհուրդը, հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի, 2012 թականի դեկտեմբերի 13-ին իրականացրեց երիտասարդական կէսօրեայ համագումար, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում, մասնակցութեամբ՝ Նոր Զուղայի եւ Ծահինջահրի երիտասարդ-երիտասարուհիների: Համագումարին ներկայ էին նաեւ Սպահանի Հայոց Թեմի ազգային մարմինների ներկայացուցիչները եւ համայնքի անդամներ: Համագումարի կազմակերպման համար Խորհրդին աջակցել էին Սպահանի Հայոց Թեմի Երիտասարդական Խորհուրդը, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Ուսանողական Միւտըրը, Հ.Յ.Դ. «Ռուբէն» Երիտասարդական Միութիւնը եւ Ծահինջահրի Երիտասարդական Խորհուրդը:

Համագումարի բացումը կատարեց հինգշաբթի՝ 2012 թականի դեկտեմբերի 13-ի երեկոյեան ժամը 6:00-ին, երիտասարդական հաւաքների համար պատրաստուած յատուկ հիմներգով: Բացման խօսքն ընթերցեց Թովմա սրկ. Գալստանեանը, ընդ որում ներկայացւած էր համագումարի նպատակներն ու դասախօսութիւնների նիւթերը:

Յաջորդիւ հերթականութեամբ ներկայացւեցին երեք դասախօսութիւններ եւ իրաքանչիւրից յետոյ առիթ տրուեց մասնակիցներին՝ իրենց հարցումներն ուղղելու փոխանցւած նիւթի կապակցութեամբ, որոնք պատասխանեցին դասախօսների միջոցով:

Համագումարի ընթացքում դասախօսելու համար Թեմի հրաւիրել

էր հոգշ. Տ. Մակար վրդ. Աշգարեանը, ով սկզբում ներկայացրեց «Երիտասարդը եւ բարոյականութիւնը» նիւթը, ապա իբրեւ թմրամոլութեան եւ ոգելից խմիչքների չարաշահման դէմ քարոզչական աշխատանք, ներկայացւեց «Ալկոհոլամոլութիւնը եւ թմրամոլութեան նորօրեայ տեսակներն ու վտանգները» նիւթը, այս բնագաւառում մասնագէտ եւ Խորհրդի հետ բազմիցս համագործակցած դկտ. Ռամին Ռադֆարի միջոցով:



Կարճ դադարից յետոյ, դարձեալ հոգշ. Տ. Մակար վրդ. Աշգարեանի միջոցով ներկայացւեց համագումարի վերջին դասախօսութիւնը՝ «Երիտասարդը եւ աստուածաշնչութիւնը» խորագրով: Հոգշ. Հայր Սուրբն աստուածաշնչական մէջբերումներով գեղեցկօրէն ներկայացրեց նիւթը եւ շեշտեց, որ քրիստոնեայի համար կեանքի առաջնահերթ պայմանը պէտք է լինի ճանաչել Աստծուն եւ ամբողջովին հնազանդել ու վստահել Նրան՝ խոստացւած փրկութեանը հասնելու համար:

Աւարտին գերշ. Սրբազան Հայրը փակման խօսքի ընթացքում անդրադարձաւ երիտասարդութեան կարեւոր դերակատարութեանը ազգի եւ եկեղեցու պահպանման հարցում, եւ շեշտեց թէ առողջ ազգ ունենալու համար պէտք է ունենալ առողջ երիտասարդութիւն՝ թէ՛ ֆիզիքապէս եւ թէ՛ հոգեպէս: Առաջնորդ Սրբազան Հայրն իր խօսքի մէջ շեշտեց, որ եթէ մարդու կեանքն առաջնորդի աստուածաշնչութեամբ եւ բարոյական սկզբունքներով, այն ժամանակ ո՛չ թմրամոլութիւնը, ո՛չ ոգելից խմիչքները եւ ո՛չ էլ այլ չարիքներ չեն կարող տեղ գտնել նրա կեանքում, որոնք անձի, ընտանիքի, ազգի ու հասարակութեան ոչնչացման ամենազարեւի ախտերն են:

Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդ

ՆՈՂԵՒՈՐ ՆԱՄԵՐԳ



2013 թականի դեկտեմբերի 20-ի երեկոյան ժամը 8:00-ին, Ն.Ձ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում, կազմակերպութեամբ Սպահանի Հայոց Թեմի Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհրդի, տեղի ունեցաւ հոգեւոր համերգ՝ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգեգմայլ եւ հաւատաբոյր մեղեդիներից, տաղերից ու շարականներից: Հոգեւոր երգերի այս ձեռնարկը նկատու էր «Հայ Գրքի Տարւան»:

Ծրագրին ներկայ էր եւ նախագախում էր Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը: Ներկայ էին նաեւ քահանայ հայրեր, Իրանի Իսլ. Խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր պրն. Ռոբերտ Բեգլարեանը, ազգային մարմինների ներկայացուցիչներ եւ Նոր Զուղայի ու Շահինշահրի համայնքների անդամներ:

կազմակերպմանը, որի համար ամէն տարի հայրենիքից հրաւիրում էր մեր եկեղեցու տաղանդաշատ զաւակներից՝ իրենց ոգեթով ձայնով մեզ հրամցնելու գեղեցիկ պահեր: Սակայն, այս տարի Խորհուրդը համագործակցութեան հրաւիրեց Շահինշահրի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանին եւ Նոր Զուղայի ու Շահինշահրի երգչախմբերի անդամներին, ովքեր պրնք. Արմէն Ամիրխանեանի եւ Համիկ Ալեքսանդրեանի ղեկավարութեամբ հանդիսատեսին հրամցրեցին բարձր գնահատանքի արժանի հոգեւոր երգ-երաժշտութեան մի համերգ:



Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհրդուն իր տարեկան ծրագրի մէջ մշտական բաժին է յատկացնում հոգեւոր համերգների

Շարունակութիւն՝ 23-րդ էջում

ՀԱՅ ԳՐԲԻ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 500-ԱՄԵԱԿԻՆ ԵՒ «ՀԱՅ ԳՐԲԻ ՏԱՐԻԱՆ» ՆԻՒՐԻԱԾ ԳՐԲԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ-ՎԱՃԱՌՔ

2012 թականի նոյեմբերի 7-ից առ 16-ը, Նոր Զուղայի Հայոց Ազգային Կրթահամալիրի սրահում, նախաձեռնությամբ «Վատարինեան» տղայոց եւ «Քանանեան» աղջկանց ուղեցոյց ու միջնակարգ դպրոցների տեսչութիւնների, ուսուցչական կազմերի եւ Ծնողական խորհուրդների կազմակերպել էր ամենամեայ գրքի ցուցահանդէս-վաճառքը, որն այս տարի նւիրած էր «Հայ Գրքի Տարւան» եւ հայ գրքի տպագրութեան 500-ամեակին:



Այս գեղեցիկ նախաձեռնութեան բացման արարողութիւնը կատարեց չորեքշաբթի՝ նոյեմբերի 7-ին, որին զոյգ դպրոցների պատասխանատուներից բացի, ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանը, քահանայից դասի, Թեմական, Կրօնական եւ Կրթական խորհուրդների ներկայացուցիչները, Նոր Զուղայի Հայոց Ազգային Մանկապարտէզ-Նախակրթարանի եւ «Արմէն» տարրական համալիրի տեսչութիւնները, Սպահան քաղաքի Ուսումնա-Դաստիարակչութեան հիմնարկի 3-րդ շրջանի ուղեցոյց ու միջնակարգ օղակների եւ արւեստագիտական դպրոցների պատասխանատուները:



Թեմակալ առաջնորդի եւ Թեմական Խորհրդի ատենապետ Նոէլ Մինասեանի ձեռամբ ժապաւէնի հատումից յետոյ, ներկաները մուտք գործեցին սրահ, որտեղ բացման խօսքով հանդէս եկաւ զոյգ դպրոցների գրադարանավարուհի Վերգինէ Միրզախանեանը, հայերէն եւ պարսկերէն լեզուներով: Նա իր բացման խօսքում անդրադարձաւ աշխարհի առաջին տպագրորիչ Գութենբերգին, 1512 թականին Վենետիկում լոյս տեսած հայերէն առաջին տպագիր գրքին՝ «Ուրբաթագիրք»-ին եւ հայ առաջին տպագրիչ Յակոբ Մեղապարտին՝ ըստ պատմաբան Լէոյի «400 տարի հայ տպագրութիւն» ուսումնասիրութեան: Գրադարանավարուհին իր խօսքն աւարտեց կարեւորութեամբ ընդգծելով 17-րդ դարի առաջին կէսին առաջնորդ Խաչատուր վրդ. Վեսարացու միջոցով Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան Վանքում հիմնադրուած տպարանի մասին, որն իր տեսակի մէջ առաջինն է նաեւ Միջին Արեւելքում:



Բացման խօսքից յետոյ, ներկաներն առիթ ունեցան մօտիկից դիտելու ցուցադրուած գրքերը: Ցուցահանդէսում առանձին բաժիններում եւ մեծ խնամքով դասաւորել էին տարբեր տարիքային խմբերին առնչող հայերէն, պարսկերէն եւ անգլերէն լեզուներով գրական, գիտական, հոգեբանական եւ պատմական գրքեր, բանարաններ, վէպեր, պատմավէպեր, մանկական գրքեր ու մտքի խաղեր:

Սրահի կենտրոնական հատուածում ցուցադրել էին «Քանանեան» դպրոցի հնատիպ գրքերի հաւաքածոյից եզակի նմուշներ, իսկ համակարգչի վրայ ցուցադրուել էին նաեւ մի շարք հին եւ նոր գրքերի թւայնացուած տարբերակներ, որոնց թւայնացման աշխատանքը կատարուել էր գրադարանավարուհու միջոցով:

Սոյն ցուցահանդէս-վաճառքն աննախադէպ ընդանաչում գտաւ աշակերտների, ծնողների եւ համայնքի ընթերցասէր ժողովրդի կողմից:

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՃՆԱԽԱՄԲԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ



Կիրակի՝ նոյեմբերի 4-ին, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի հրաւերով, Նոր Զուղա ժամանեցին «Հայ Դատն Այսօր» 9-րդ Խորհրդածողովի զեկուցաբերներ՝ Երրոպայի Հայ Դատի Գրասենեակի պատասխանատու Գասպար Կարապետեանը, պատմաբան, Արցախի ՀՅԴ Կենտրոնական Կոմիտեի անդամ Լեոնիկ Յովհաննիսեանը, իրանագէտ, աագ գիտաշխատող, գիտությունների թեկնածու, դոցենտ Գոհար Իսկանդարեանը եւ թուրքագէտ, պատմական գիտությունների թեկնածու Արտակ Շաքարեանը:



Նախքան իրաքանջիւր դասախօսական ելոյթը, հաղորդավարը ներկայացրեց պատկան զեկուցաբերի հակիրճ կենսագրականը:



Նոյն օրը երեկոյեան ժամը 7:30-ին, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի կենտրոնատեղիում կայացաւ դասախօսական երեկոյ, որտեղ հրաւիրեալներն առիթ ունեցան ունկնդրելու վերոյիշեալ զեկուցաբերների դասախօսական ելոյթները: Ծրագրին ներկայ էին՝ թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, արժն. Տ. Մեսրոպ քինյ. Գալստանեանը, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի անդամները, Թեմի ազգային մարմինների, միութիւնների, հայոց ազգային դպրոցների տեսչությունները, ուսուցչական կազմերի եւ Ծնողական խորհուրդների ներկայացուցիչները:
Ծրագրի սկզբում բացման խօսքով հանդէս եկաւ օրւայ հաղորդավար Վերգինէ Միրզախանեանը:



Երեկոյի ընթացքում նախ Երրոպայի Հայ Դատի գրասենեակի զեկուցը փոխանցեց Գասպար Կարապետեանը, ապա հերթաբար ելոյթ ունեցան Գոհար Իսկանդարեանը՝ «Հայկական հարցը՝ Իրանի արտաքին քաղաքական համատեքստում», Լեոնիկ Յովհաննիսեանը՝ «Հողային պահանջատիրութիւնը՝ Արցախի հիմնահարցի համատեքստում» եւ Արտակ Շաքարեանը՝ «Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնները եւ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի տարելիցը» թեմաներով: Զեկուցների աւարտին դասախօսները պատասխանեցին ներկաներին յուզող հարցերին:

ՏՀԱՆԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՃՆԱԽՄԲԻ ՆԱԽԱԾԵՆՈՒԹԵԱՄԲ ԵՒ «ՌՈՒՐԷՆ» ԵՐԻՍ. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԳՄԱԿԵՐԱԿՈՒԹԵԱՄԲ ԲԻՆԳՉԱՐԹԻ՝ ՆՈՅՄԲԵՐԻ 22-ԻՆ, Ն.Ջ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՍ» ՄԻՈՒԹԵԱՆ ՍՐԱԽՈՒՄ, ԿԱՅԱԾԱՆ ԱՆԻՐԱԽԱՆԱՔ՝ «ԹԵԼԵՓՈՆ 2012»-Ի ՄԻՋՈՍՏԱՆԻ ՉՐԶԱԳԾՈՒՄ «ՄԵՐ ԳԻՒՂՐ» ՆՉԱՆԱՐԱՆԻ ՆԵՐՔՅՈՒՅ:

Չրջանի Հայ Դատի յանձնախմբի նախաձեռնությամբ եւ «Ռուրէն» Երիտ. Միութեան կազմակերպչութեամբ Բինգչարթի՝ Նոյեմբերի 22-ին, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարաս» Միութեան սրահում, կայացաւ Անիրախանաք՝ «Թելեֆոն 2012»-ի միջոցառման շրջագծում՝ «Մեր գիւղը» Նչանարանի Ներքոյ:

յաստան» համահայկական հիմնադրամի գրասենեակից ստացած 2011 թականի Անիրատութիւնների վաւերագրերը շտաբում յանձնեցին Ասխորդ տարւայ Անրատութիւններին:



Նիրախանաքի կենտրոն այցելելով, Անրատութիւն կատարեցին Աաւ Ապահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանը, Ծահինչահրի հայ համայնքի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի պատասխանատուները եւ ազգային մարմինների ու միութիւնների անդամներ:

Այս տարի 10-րդ տարին է, որ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի հեռուստամարաթոնի գուգահեո՝ Նոր Ջուղայում կազմակերպում է Անրախանաք:

Ինչպէս Ասխորդ տարիները, Նոր Ջուղայի եւ Ծահինչահրի իրաքանչիր հայոց ազգային դպրոցի աշակերտներ միատեղելով իրենց գումարները, Նոյնպէս մասնակցութիւն բերեցին սոյն Անրախանաքին:



Միջոցառման մեկնարկը տրեց երեկոյեան ժամը 7:30-ին եւ այն շարունակեց մինչեւ գիշերւայ 11:00-ը, որի ընթացքում տնտեսական ճգնաժամից առաջացած իրավիճակին հակառակ, մեծաթիւ հայրենակիցներ Նոր Ջուղայից, Ծահինչահրից, Թեհրանից եւ Իրանի այլ քաղաքներից իրենց Անրատութիւնները փոխանցեցին՝ Անրախանաքի շտաբ այցելելով, հեռախոսակապի միջոցով խոստումներ տալով եւ կազմակերպիչ յանձնախմբի կողմից Անրախանաք ստացած հաշւեհամարին գումարներ փոխանցելով: Իսկ «Հա-

Միջոցառման ամբողջ ընթացքում սրահում Անրախանաք ժողովուրդը կարողացաւ պաստառի վրայ հետեւել «Հեռուստամարաթոն 2012» հեռուստաժրագրին:



ԹԱՂԷՈՎ ԹԱՂԷՈՎԵԱՆԻՆ ԿԻՐԻՎԾ ՅՈՒՇԵՐԷԿՈՅ



գով, Հ.Յ. Դաշնակցութեան զինուոր Թաղէոս Թաղէոսեանի կենսագրութեանը՝ բացատրելով նրա կեանքի ու գործունէութեան եւ կուսակցական աշխատանքներում ունեցած ներդրման մասին:



Բանախօսի խօսքում կարեւորութեամբ ընդգծւած էր. «*Թաղէոսեանն իր ուրոյն տեղն է գրադեցնում Հայաստանում եւ Իրանում Հ.Յ.Դ.-ի պատմութեան մէջ: Նա ինչպէս Հայաստանում, այնպէս էլ վտարանդի դարձած՝ Իրանում իր կեանքն է նւիրել իր սուրբ գաղափարին: Նրա գործունէութիւնը բաժանուած է գլխաւոր երեք շրջանների՝ մինչեւ 1921 թ. Հայաստանում, 1922-1931 թթ. Թաւրիզում, 1931-1975 թթ. Սպահանում: Հայաստանում, ի մասնաւորի Երեւանում, Քանաքեռում եւ Կոտայքում ունենում է բեղուն գործունէութիւն: Նրա հետեւողականութեան շնորհիւ կազմակերպւել են գաղտնի միութիւններ եւ կուսակցական խմբեր, կազմակերպւել են ցոյցեր: Ըզբաղւել է շրջանների զինման եւ ինքնապաշտպանութեան գործով, պատրաստել է տւել նաեւ զինապահեստներ: Թաղէոսեանն ունէր կուռ կազմակերպութեան ոգի. որտեղ որ ինքն էր պատասխանատուն, այնտեղ լինում էր ամենակազմակերպւածը եւ ամենալաւը»:*

Նախաձեռնութեամբ «Թաղէոս Թաղէոսեան» Պատանեկան Միութեան, հինգշաբթի՝ դեկտեմբերի 6-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սարհում տեղի ունեցաւ յուշերեկոյ՝ նիւրած ազգային-կուսակցական գործիչ, վաստակաւոր ուսուցիչ եւ Նոր Զուղայի Հ.Յ.Դ. Պատանեկան Միութեան հիմնադիրներից Թաղէոս Թաղէոսեանի (Բակուր Կոտայեան) անմոռաց յիշատակին: Երեկոյին ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, Ծահինշահրի հայ համայնքի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, արժն. Տ. Մեսրոպ քհնյ. Գալստանեանը, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի անդամները, ազգային մարմինների, հայոց ազգային դպրոցների ու միութիւնների ներկայացուցիչներ եւ համայնքի անդամներ:



Միջոցառումը, որը լրիւրէն իրագործւել էր «Թաղէոս Թաղէոսեան» Պատանեկան Միութեան անդամ-ուհիների միջոցով, բացւած յայտարարւեց Լաուրա Խուդաբախշեանի ողջունի խօսքով: Այնուհետեւ ներկաները մէկ րոպէ յոտնկայս լուրթեամբ իրենց յարգանքի տուրքը մատուցեցին 1988 թականի դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի զոհուածների յիշատակին, որից յետոյ բեմ հրախրւեց օրւայ բանախօս Վահագն Խուդաբախշեանը՝ առիթի առնչութեամբ արտայայտւելու:

Պատանի բանախօսն անդրադարձաւ Հայրենիքի եւ հայ ժողովրդի նիւրեալ, ազգային-կուսակցական գործիչ, կրթական մշակ եւ դաստիարակ, երիտասարդական կառույցների առաջացման ջատա-

տանի եւ երիտասարդներից, ովքեր հետաքրքիր յուշեր էին պատմում Թաղէոսեանի կատարած ուսուցչական եւ կուսակցական գործու՛նէութիւնից:



Ծրագրում ներառւած էր նաեւ գեղարուեստական բաժին, որի ընթացքին Միութեան անդամ-ուհիները հանդէս եկան երգերով եւ ասմունքներով: Յայտագիրն սկսեց Հ.Յ.Դ. զինանշանի բացատրութեամբ: Սույն բաժինը ներկայացրեցին Արամէ Մովսիսեանը, Անիա Անդրիասեանը, Արինէ Իսաղուլեանը, Վահան Վարդեանեանը եւ Թեմի Բաղրամեանը: Մեներգներով հանդէս եկան Թանգիկ Միրզախանեանը, Վանա Ծիրուանեանը եւ Թեմի Մկրտչեանը, իսկ ասմունքեցին Ծաղիկ Մատթէոսեանը եւ Լաուրա Խուրաբախչեանը: Գեղարուեստական բաժնի աւարտին Պատանեկան Միութեան երգչախումբը

ներկայացրեց երկու խմբերգեր: Յատկանշելի է, որ «Թ. Թաղէոսեան» Պատանեկան Միութեան Վարչութիւնն եւս ունեցաւ իր խօսքը, որն ընթերցեց Սարա Ներսիսեանը:



Կազմակերպւած յուշերեկոյի աւարտին, ներկաները կից սրահում դիտեցին Թաղէոս Թաղէոսեանի անձնական գրութիւններից եւ իրերից պատրաստուած գեղեցիկ ցուցահանդէսը, որի ընթացքում ստացան հանգուցեալ ընկերոջ յուշերից պատրաստուած գրքոյլը:

Շարունակութիւն 17-րդ էջից
ՆՈՐՏՈՐՆԵՐԳ



Համերգի ընթացքում, հոգշ. Հայր Սուրբի, տկնյք. Արսինէ Մարգարեանի, Ալլին Քեշիշեանի, Վեհանուշ Աւետումեանի եւ օրդք. Լալա Ալեքսանդրեանի, Անասիկ Յովսէփեանի, Մելանիա Դալթեանի, Սօսէ Ասատրեանի, Վեհանուշ Ծախիշեանի, Լալագէ Իսաղուլեանի եւ Նարինէ Ալլահվերդեանի միջոցով հնչեցին Խաչի, Աստուածածնի, Յարութեան եւ Ծննդեան տօներին վերաբերող «Բաց մեզ Տէր», «Յայս յարկ», «Տիրամայր», «Որ ես մայր իմ», «Վարանիմ ի մեղաց», «Խնկի ծաղի նման ես», «Հաւուն-հաւուն», «Ով պարտիզպան», «Ի գերեզման», «Նոր ծաղիկ», «Ջրօրհնեաց շարական», «Այսօր տօն է սուրբ ծննդեան», «Գոհանամք ըզքէն Տէր» մեղեդիները, տաղերն ու շարականները:

Երգեհոնի նագակցութեամբ հանդէս եկան պրնցք. Համիկ Ալեքսանդրեանը եւ Թաղէ Պօղոսեանը:

Ձեռնարկի աւարտին Բեմ հրաւիրեցին առաջնորդ Սրբազան Հայրը եւ Կրօնական Խորհրդի ատենապետ պրն. Արշալոյս Խուրավերդեանը, որոնց միջոցով ծրագրի մասնակիցներին յանձնեցին գնահատագրեր եւ համեստ յուշանւէրներ: Ապա Սրբազան Հայրը հայրական խօսք ասաց եւ իր օրհնութիւնը փոխանցեց ներկաներին, գնահատելով Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհրդին՝ ծրագրի կազմակերպման եւ հոգշ. Հայր Սուրբին, յարգելի դէկավարներին եւ երգիչներին՝ ծրագրի իրականացման համար:

Առաջնորդ Սրբազան Հայրն իր ուրախութիւնը յայտնեց, որ Հայոց Եկեղեցու երաժշտական գանձերը հնչում են երիտասարդ անհատների շրթներից: Նա յորդորեց բոլորին, որ այլ երգ-երաժշտութեան կողքին նաեւ լաւապէս արժէքաւորեն եւ ունկնդրեն հոգեւոր-եկեղեցական երգերը, որոնք աստուածաուար աղօթք ու պաշտամունք լինելով՝ հոգու սնունդ են անկասկած:

Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդ

«ԶԱՐԹՕՆՔ» ՊԱՐԱԽՄԲԻ ԵԼՈՅԹԸ՝ ՆԻՐԻԱԾ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՕՐԻԱՆ ԵՒ ԽՄԲԻ ԳՈՐԾՆԵՈՒԹԵԱՆ 25-ԱՄԵԱԿԻՆ



Թեհրանի «Զարթօնք» պարախումբըն իր գործնէութեան 25-ամեակի նշման ձեռնարկների շարանում, գեղեցիկ մտալըացում ունեցաւ, իր հոբելէնական տօնակատարութեանը մասնակից դարձնել նաեւ Նոր Զուղայի մշակութասէր հասարակութեանը եւ համերգային ծրագրով Սպահան ժամանեց նոյեմբերի 1-ի երեկոյեան:

Համերգը, նախագահութեամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի, Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Կենտրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Մշակութային Միաւորի Վարչութեան համագործակցութեամբ, տեղի ունեցաւ ուրբաթ՝ նոյեմբերի 2-ի երեկոյեան, Միութեան սրահում:

Յանուն Մշակութային Միաւորի Վարչութեան, ողջոյնի եւ բացման խօսք ասաց Նայիրի Թահմազեանը եւ բեմը տրամադրեց «Զարթօնք»-ին: Խումբն իր 25-ամեայ գործնէութեան խորհրդով, հանդէս եկաւ 25-պարային համարով, որի մեկնարկը՝ ասմունքով զուգորդած «Արցախ» պարն էր՝ մարտական տրամադրութիւն եւ միաժամանակ յաղթանակի մեծ խանդավառութիւն յաղորդող, որին յաջորդեց հայ եւ օտար ժողովուրդների ազգագրական պարերը, նաեւ՝ դասական, ժամանակակից, մանկական, կրկէսային պարեր եւ հատուածներ Coppelia եւ Carmen բալէտներից:

Ծրագրի ընթացքում մէկ ընդ մէջ հնչեց պարախմբի 25-ամեայ գործնէութեան զեկոյցը՝ ներկայացնելով խմբի աշխատանքներն ու ձեռքբերումները Իրանի հայահոծ քաղաքներում, Հայաստանում եւ այլ երկրներում: Ելոյթների աւարտին, երբ բոլոր մասնակիցները ներկայացան բեմում, խմբի անունից յուշանւէր յանձնեց Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Կենտրոնական Վարչութեանը:



Համերգի եզրափակիչ բաժնում, թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրը մեծ ոգետրութեամբ խօսեց պարային ելոյթների մասին եւ իր գնահատանքի խօսքը փոխանցեց Միութեան Կենտրոնական ու Մշակութային Միաւորի վարչութիւններին, «Զարթօնք» պարախմբի ղեկավար եւ պարուսոյց Լորեթա Աւետիսեանին, նրանց ընկերակցող Ծնողական Խորհրդին ու պատասխանատուներին, մանաւանդ պարախմբի անդամ-ուհիներին եւ ասաց. «Մեր մանուկները, պատանիներն ու երիտասարդները, իրենց պարով մեզ կեանք, շունչ, ոգի ու պատգամ փոխանցեցին եւ կարողացան գեղեցիկօրէն դրսեւորել մեր ժողովրդի ապրումները: Նրանք «Արցախ»-ով սկսեցին իրենց ելոյթը՝

Շարունակութիւն՝ 35-րդ էջում

**ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ»
ՄԻՈՒԹԵԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻԱՌՈՐԻ
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ
ՆԵՒՆՑ ՍՈՅՆ ՏԱՐԻԱՅ ՄԱՐԶԱԿԱՆ
ԶԱՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ**

Երկրի եւ նահանգի մակարդակում կայացած մարզական մրցութիւններում ու Թեհրանում Հ.Մ. «Արարատ» Կազմակերպութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցած 44-րդ Համահայկական խաղերում Նոր Զուղայի մարզիկ-ուիիների ձեռաքերումներն արժեւորելու եւ գնահատելու նպատակով, չորեքշաբթի՝ նոյեմբերի 14-ի երեկոյեան Միութեան սրահում տեղի ունեցաւ հանդիսութիւն, որին ներկայ էին Միութեան Կանտորնական Վարչութեան ներկայացուցիչները, Մարզական Միաւորի Վարչութիւնը, այլ միաւորների վարչութիւնների ներկայացուցիչները, մարզիկ-ուիիներն ու պաշտօնեաները:

համար բեմ հրաւիրուեցին Միութեան Կենտրոնական ու Մարզական Միաւորի վարչութիւնների ներկայացուցիչները: Պարգետարուեցին նաեւ նշեալ խմբերի մարզիչները:



Կենտրոնական Վարչութեան նախագահ Վարուժ Մինասեանը հանդէս եկաւ շնորհաւորանքի ու շնորհակալական խօսքերով ուղղւած՝ մարզիկ-ուիիներին, մարզիչներն ու պատասխանատուներին, արձանագրած յաջողութիւնների, մանաւանդ նրանց կազմակերպւածութեան ու կարգապահ կեցւածքի համար, որը կազմակերպիչների կողմից միշտ արժանացել են գնահատանքի:



Պրն. Մինասեանը շնորհաւորեց նաեւ Միութեան Մարզական Միաւորի Վարչութեանը, որը մտայղացումն ունեցաւ այս տարի մեդալաբաշխման արարողութեան փոխարէն, ուրախ երեկոյի տեսքով նշել ընթացիկ տարւայ մարզիկ-ուիիների յաջողութիւնները: Նա իր ելոյթի աւարտին ասաց. «*Եթէ կայ ներուժ եւ կամք, ապա կայ նաեւ արդիւնք ու յաղթանակ*»:

Այնուհետեւ նահանգի եւ երկրի մակարդակում մեդալակիր անհատներն ու խմբերի անձնակազմերը պարգետարուեցին յուշանւէրներով, որոնց յանձնման

Հանդիսութեան ընթացքում համառօտ զեկոյց ներկայացւեց 44-րդ Համահայկական խաղերի արդիւնքից: Երեկոն շարունակւեց «Անի» նաագախմբի ընկերակցութեամբ խրախճանքով եւ մարզիկ-ուիիների պատիւն կազմակերպւած ճաշկերոյթով: Ծրագրի հաղորդավարութիւնը կատարում էր Անդրիա Խաչատրեանը:

ՄԵԾ ՏԱՆԴԻՍՈՒԹԵԱՄԲ ՆՇԻՆՅՆ ԵՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՏԱՅՈՒՏԵԱՅ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 120-ԱՄԵԱԿԸ



Նոր Զուղայի Հայուհեաց Բարեգործական ընկերության 120-ամեակի յոբելեանական ձեռնարկը տեղի ունեցավ հինգշաբթի՝ նոյեմբերի 29-ի երեկոյան ժամը 7:30-ին, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միության սրահում, որին ներկայ էին Սպահանցի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Ս. Բարգէն եպս. Զարեանը, քահանայից դասը, ազգային մարմինների, միությունների, հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչներ, ընկերության անդամուհիները եւ այլ հրապրեալներ:

բանութեամբ կանայք, որոնք իրենց ուսերին են կրում ոչ միայն ընտանեկան պարտականութիւններն ու պարտաւորութիւնները, այլ ազգապահպանման զփարին աշխատանքը՝ իրենց ձիրքերով ու հեռատես գիտակցութեամբ: Նրանք իրենց նւիրումով ու հաւաքական աշխատանքով երբեմն կատարում են անկարելին, որպէսզի պահպանեն, զարգացնեն ու կրկնապատկեն հոգեւոր ու մշակութային գանձերը»:

Բացման խօսքից յետոյ, ներկաների յոռնկայս ունկնդրութեամբ նախ արտասանեց ընկերության ժողովների բացման աղօթքը՝ անդամուհի Մանուշ Յարութիւնեանի միջոցով, այնուհետեւ թեմակալ առաջնորդի միջոցով ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառի օրհնութեան գիրը՝ Միության 120-ամեակի յոբելեանի առնչութեամբ:



Բացման խօսքով հանդէս եկաւ օրւայ հանդիսավար Մանիա Ղուկեասեանը, շեշտելով. «*Ժողովուրդները մնում են պատմութեան թատերական բեմում, երբ ունենում են ամուր նկարագրով եւ ուրոյն հոգե-*



Հանդիսութեան շարունակութեան մէջ Բարեգոր-

ծական Ընկերության խօսքն ընթերցեց Լիդա Վարդանեանը: Նա Ընկերության անունից ողջունելով հիւրերի ներկայութիւնը, անդրադարձաւ 1892 թականին ուսուցիչ Յովսէփ Բարսեղեանի նախաձեռնութեամբ եւ մի խումբ հայ աշակերտուհիների համագործակցութեամբ հիմնադրած «Որբուհեաց Խնամակալ Ընկերության» հիմնադրման նպատակներին, որը հետագայում վերանանւեց «Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւն»: Տկն. Վարդանեանն ասաց. «Սկզբնական շրջանում Ընկերութիւնը հոգ է տարել որբերի, աղքատների, այրի կանանց եւ այլ կարիքաւորների բարօրութեան կապակցութեամբ, իսկ յետագայում ընդլայնելով իր գործունէութիւնը՝ զբաղւել է նոր աշխատատեղիների եւ աշխատանքների ստեղծման գործով, ինչի արդիւնքում ստեղծւել են Ընկերութեան ջուլհակագործութեան արհեստանոցը եւ գորգագործարանը...»: Խօսքի աւարտին, Լիդա Վարդանեանը յիշելով մեզանից առյաւէտ բաժանած հիմնադիրներին, բարերարներին ու անդամուհիներին, ուժ ու կորով մաղթեց բոլոր նրանց՝ ովքեր ջանք չեն խնայում ընկերության վեճ նպատակների իրագործման ուղղութեամբ:

խօսն իր խօսքի աւարտին կերտորութեամբ ընդգրծեց եւ բարձր գնահատեց Բարեգործական Ընկերության միջոցով իրագործուող աշխատանքները, որոնց շարանում կարելի է թարկել որբերին խնամելը, ուսանողներին կրթաթոշակներ յատկացնելը, Ծննդեան եւ Յարութեան տօներին կարիքաւորներին օժանդակելը, հայոց ազգային դպրոցներին եւ Սպահանի Պետական Համալսարանի Հայագիտական Ամբիոնին սատարելը, Զաւախքին ու Արցախին զօրակցելը, Հայ Դատի աշխատանքներին օժանդակելը եւ բազմաթիւ այլ աշխատանքներ:



Դասախօսութիւնից յետոյ կատարեց Ընկերության 120-ամեայ գործունէութիւնը յանդիմանող գրքի գինեձօնի արարողութիւնը մասնակցութեամբ թեմակալ առաջնորդի, Թեմական Խորհրդի ատենապետ Նոէլ Մինասեանի, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչ Վարուժ Մովսիսեանի, օրապահ Ռաթով Օհանեանի եւ Բարեգործական Ընկերության Վարչութեան նախագահ Սանդրա Խուրաբախչեանի, որից յետոյ հատուեց 120-ամեակի առիթով պատրաստուած խորհրդանշական կարկանդակը՝ անդամուհիներ Յաւերժիկ Կարապետեանի, Շնորհ Եսայեանի եւ Մագի Խաչատրեանի միջոցով:

Բարեգործական Ընկերության խօսքին յաջորդեց օրապահ Ռաթով Օհանեանի դասախօսական ելոյթը: Նա նշելով ողորմածութեան կարեւորութիւնը՝ այսպէս ասաց. «Ողորմածութիւնն իր յատուկ տեղն է ունեցել մեր ժողովրդի գանազան խաւերի մէջ, յատկապէս քրիստոնէութիւնն ընդունելուց յետոյ: Ողորմութիւնն իր յատուկ տեղն է ունեցել հայ կանանց մէջ, քանի որ կանայք իրենց բնաւորութեամբ աւելի զթափրտ են ու զգացական»: Դասախօսութեան շարունակութեան մէջ, արն. Օհանեանն անդրադառնալով մեր պատմութեան մէջ յանդիմանած հայ թագուհիների եւ ազնական կանանց կատարած բարեգործութիւններին, ներկայացրեց նրանց կեանքից դրագներ, թէ ինչպէս ազնական եւ մեծահարուստ հայուհիները, լինելով իրենց ամուսինների կողքին, հոգացել են ժողովրդի կարիքները եւ ապրել են նրանց հոգսերի հետ: Դասա-



Հանդիսութեան ընթացքում հանդիսավարի միջոցով ընցերցւեցին Ընկերության յրբեւեանի առթիւ

ստացած ուղերձներ՝ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանից, Նոր Ջուղայի Հայ Կանանց Գթութեան Միութեան, Հայ Ուս. Չհարմախալ Միութեան Նոր Ջուղայի Մասնաճիւղի, Փերիոյ Կրթասիրաց Միութեան Կենտրոնական վարչութիւններից, Թեհրանի Հայ Կանանց Բարեգործական Ընկերութիւնից, «Աշտարակի Տարածաշրջանի Կանանց Ասոցացիայ» Հասարակական Կազմակերպութիւնից, Լոս Անջելեսի Իրանահայ Միութիւնից, Հայոց Ազգային «Արմէն» համալիրի եւ «Քանանեան» աղջկանց ու «Կատարինեան» տղայոց ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցների տեսչութիւններից, ուսուցչական կազմերից ու Ծնողական խորհուրդներից, արժն. Տ. Խաչատուր քինյ. Ջարգարեանից, վաստակաւոր ուսուցիչ Լեւոն Մինասեանից, արն. Արշալոյս Խուդավերդեանից:

երեկոյի կազմակերպման գործում դերակատար անհատներին շնորհեցին յուշանւերներ եւ շնորհակալագրեր՝ ձեռամբ առաջնորդ Սրբազան Հօր, Ընկերութեան Վարչութեան նախագահ Սանդրա Խուդաբախշեանի եւ 120-ամեակի Յրելեանական Յանձնախմբի նախագահ Իսկուհի Դաւթեանի:



Որպէս օրւայ եզրափակիչ խօսք իր հայրական օրհնանքը փոխանցեց թեմակալ առաջնորդը: Գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը նշելով, որ մարդ երջանիկ է, երբ միսների երջանկութեան պատճառն է հանդիսանում, բարձր գնահատեց Միութեան 120-ամեայ գործունէութիւնը եւ շարունակեց. «120-ամեայ Բարեգործական Ընկերութիւնը ո՛չ միայն իրագործել է բարեսիրական եւ հայրենասիրական աշխատանքներ, այլեւ եղել է դպրոց, որտեղ ողորմութեան, գթութեան, սիրոյ եւ նւիրումի ոգով է դաստիարակել իր անդամուհիներին»: Սրբազան Հայրն իր խօսքի ասարտին խաղաղութիւն ցանկանալով Ընկերութեան նշեցեալների հոգիներին, ողջունեց Վարչութեանն ու բոլոր անդամուհիներին եւ ուժ ու կորով մաղթեց նրանց՝ իրենց աստուածահաճոյ աշխատանքում:

Երեկոն նաեւ ողողւած էր գեղարեստական անգուգական կատարումներով: Արքի Բաբումեանի ղեկավարութեամբ «Արփա» նաւագայիմբի կենդանի կատարման ներքոյ, մենակատարմամբ հանդէս եկան միջազգային մրցոյթի դափնեկիր երգչուհի Բեթինա Յովսէփեանը՝ «Իմ Անի» եւ «Կապոյտ մանուշակ», իսկ վաստակաւոր երգչուհի եւ Միութեան տարիների անդամուհի Օֆիկ Մատթէոսեանը՝ «Էլեգիա» ու «Հայոց կանաչք» երգերով: Գեղարեստական կատարումների շարանում ասմունքեցին վաստակաւոր ուսուցչուհի Անահիտ Կիրակոսեանը՝ Պարոյր Սեւակի «Իմ Հայրենիք» եւ համալսարանի դասախօս դկտ. Սիլւա Ալլահվերդեանը՝ Սիլւա Կապուտիկեանի «Քելէ լաօ» բանաստեղծութիւնները:



Վերջում ներկաները հրաւիրեցին ճաշակելու ընկերութեան բազմաշնորհ անդամուհիների միջոցով պատրաստուած ընթրիքը եւ դիտելու 120-ամեայ գործունէութիւնը ներկայացնող ցուցահանդէսը, որի իրականացման համար համապատասխան զգեստներով դերեր էին ստանձնել Ընկերութեան «Փարոս» ասմունքի խմբի սաները:

Միջոցառման շարունակութեանը յրելեանական

ê. ä²î²ð²¶ °ô
 Ðà¶°Ð²Û¶êî²Û
 ²ð²ðàòàòÀÆòÛ Û.æ. Ð²Ûàò
 ²¼¶²ÛÆÛ Ì°ð²ÛàòÆ
 ´²ð°ð²ðÛ°ðÆ ÛÆÐ²î²îÆÛ

Բարեգործությունն ու բարերարությունը մարդկային առաքիճություն են, յանձնարարություն՝ մարդ արարածին փորձելու և դաստիարակելու:

Բարերար անձը բարի հովանավոր է՝ սոգորած վեճ գաղափարներով:

Բարերարը միշտ յիշում է իր կատարած աստուածահանոյ գործունեության համար: Նրա կատարած ներդրումը անփոխարինելի և անմոռանալի է:

Կիրակի՝ 2012 թականի դեկտեմբերի 2-ի առաօտեան, Նոր Զուղայի Ա. Աստուածածին եկեղեցում, յաւարտ Ա. Պատարագի, տեղի ունեցաւ Հոգեհանգստեան արարողութիւն՝ Ն.Զ. Հայոց Ազգային Ծերանոցի բարերաների և Հայ Կանանց Գթութեան Միութեան հանգուցեալ անդամուհիների յիշատակին: Սրբազան արարողութեանը նախագահեց և քարոզեց Սպահանի Հայոց Թեմիս առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը:



Պատարագին ներկայ էին քահանա-

յից եւ դպրաց դասերը, Կրօնական Խորհրդի եւ Նոր Զուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութեան ներկայացուցիչները, Հայ Կանանց Գթութեան Միութեան անդամուհիները եւ հոծ թուով հաւատացեալներ:

Հոգեհանգստեան արարողութիւնից յետոյ, ներկաները հիրասիրեցին Ա. Աստուածածին եկեղեցու սրահում: Հիրասիրութեան ընթացքում Հայ Կանանց Գթութեան Միութեան նախագահ Արմինէ Սիմոնեանը, ողջունելով հաւատացեալների ներկայութիւնը, հակիրճ տեղեկութիւններ փոխանցեց Ծերանոցի հիմնադրութեան մասին եւ աւելացրեց. «Քիչ չեն եղել բոլորանէր ջուղայահայեր, ովքեր ժամանակի պայմաններից ելնելով իրենց լուծման են ներդրել՝ որեւէ ազգային հաստատութիւն հիմնելու կամ պահպանելու նպատակով, այն հաստատ համոզումով, որ համայնքի զարգացման եւ գոյատեւման համար պէտք են կրթեած եւ դաստիարակած սերունդներ: Քիչ չեն եղել այն բարերաները, ովքեր անտեսելով բոլոր դժարութիւնները, լծել են համայնքի զարգացման եւ պահպանման սրբազան գործին»: Նա իր խօսքերն աւարտեց ասելով. «Քիւր յարգանք մեզանից առյաւէտ բաժանեած անձնէր բարերաների, հիմնադիրների եւ անդամուհիների յիշատակին, ովքեր թողնելով իրենց անձնական հանգիստը, ժամանակի դժարութիւններն անտեսելով՝ հիմնեցին Հայ Կանանց Գթութեան Միութիւնն ու Ազգային Ծերանոցը եւ անկեղծօրէն գործեցին Միութեան յառաջադիմութեան համար»:



Միջոցառման շարունակութեանը ձօնեցին սրտաբուխ երգեր:

Վերջում գերշ. Սրբազան Հայրն իր հայրական օրհնանքն ու պատգամը փոխանցեց ներկաներին: Առաջնորդ Սրբազան Հայրն անդրադառալով Հայ Կանանց Գթութեան Միութեան կատարած լայնածաւալ աշխատանքներին եւ իրենց ունեցած նիւթա-բարոյական ներդրմանը՝ Արցախի գոյատեւման, Զաւախքի օժանդակութեան եւ Հայ Դատի ճանաչեցման գործում, յիշեց Միութեան հիմնադիրներին ու Հայոց Ազգային Ծերանոցի բարերաներին եւ աւելացրեց. «Այսօր, այս սրբազան յարկի տակ ի մի ենք եկել՝ յիշելու եւ երախտագիտութեան խօսք ասելու մեզանից առյաւէտ բաժանեած այն անձնէր հիմնադիրին եւ միւս անդամներին, ովքեր սրանից մէկ դար առաջ, հակառակ տիրող աննպաստ պայմանների, հիմնադրեցին Հայ Կանանց Գթութեան Միութիւնը, եւ նախանձախնդիր լինելով նրա գոյութեանն ու բարգաւաճման նկատմամբ, աշխատեցին եւ իրենց նիւթական ներդրման շնորհիւ կառուցեցին Հայոց Ազգային Ծերանոցը: Այսօր եւս քիչ չեն նման միութեանականներ, ովքեր հտեւորդներն են այն անձնագոհ անդամուհիների: Փառք ու պատիւ ձեզ»:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ



Հովանավորութեամբ Ծափնշահրի Հայ Համայնքի Վարչութեան եւ հոգետոր հովիւ հոգ՝ Տ. Անանիա վրդ. Գունանեանի, Ծափնշահրի Երիտասարդական Խորհուրդը հոկտեմբերի 31-ին Ծափնշահրի Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցում կազմակերպել էր երիտասարդական հանդիպում: Հանդիպմանը մասնակցում էին այս ուսումնական տարում նորամուտ ուսանողները, ներկայի ուսանողները՝ ովքեր սովորում են տարբեր բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում, եւ միջնակարգ դպրոցի աշակերտութիւնը, այսինքն նրանք՝ ովքեր պատրաստուում են ապագայում համալրել ուսանողութեան շարքերը:



Հանդիպումն սկսեց հոգ՝ Հայր Սուրբի բարեմաղթանքի աղօթքով, ապա ուսանողներին ուղղած նրա շնորհատրանքով: Ընորհատրանքի խօսքեր ասեց նաեւ Ծափնշահրի Հայ Համայնքի Վարչութեան անունից՝ պրն. Զանիկ Թահմազեանի միջոցով:

Նորամուտ ուսանողներին ներկայացրեց Քաշանի բժշկական գիտութիւնների համալսարանի նորամուտ սուսանողուհի

Անի Մինասքանեանը: Այնուհետեւ ուսանողները մտերմիկ մթնոլորտում ներկայացրեցին իրենց համալսարանի այն բաժինները, որտեղ սովորում են, նաեւ ուսման ընթացքում ծագած խնդիրները: Նրանց բազմաթիւ օգտակար խորհուրդներ տւեցին թէ այն ուսանողները, ովքեր սովորում են բարձր կուրսերում եւ թէ յատկապէս հոգ՝ Հայր Սուրբը, ով օգտակար ուղղութիւններ տւեց բոլորին. նա խորհուրդ տւեց լաւ սովորել, եւ գիտակ լինել կրօնական հարցերում:

Հոգ՝ Հայր Սուրբը, ինչպէս միշտ, իր պատրաստակամութիւնը յայտնեց՝ օժանդակելու եւ երիտասարդների մօտ ծագած կրօնական հարցումների վերաբերեալ անհրաժեշտ տեղեկութիւններ տրամադրելու նրանց, որպէսզի կարող լինեն որեւէ հարցին սպառիչ պատասխան տալ ուր որ պետք է, այն էլ գրագէտ, համոզիչ եւ բաւարար ձեւով:

Երիտասարդները ցանկութիւն յայտնեցին, որ նման հանդիպումները լիեցնեն շարունակական եւ յաճախակի:

ԿԱՆԱՆՑ ԶԵՌԱՐԻԵՍՏԻ ՑՈՒՑԱՀԱՆՂԷՍ ԾԱԿԻՆՇԱՀՐՈՒՄ



